



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.71-Մ

Տ-80

1772

Կոնս Լ. Տօլստոյի

Ուրբեկոց

Թիֆլիս 1891

891.71Տ

Տ-80

XVI, M.

**ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ**

объединенного здесь срока


1958

2003

891.71-93+[82] 2889

S-80

vo

ԿՈՄՍ Լ. ՏՕԼՍՈՅԻ  
„Ясная поляна“

# Ռ Ո Ք Ի Ն Ջ Օ Ն

(Փոքերի Կոմիտե)

Քարղմանկ  
ՓԻԼԻՊՊՈՍ ՎԵՐԻԵՆԵԱՆ

1002  
6267  
9



Ք Ի Ֆ Լ Ի 2  
ՅՈՎ. ԶՈՆՆԵՍԻ ՍՈՍՏԵՐՈՒՆԵՍԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԵՆԵԱՆ ՓՈՂՈՅ. № 1, 2.

1891

2228  
5665

Дозволено цензурою. 28 Января, 1891 г. Тифлисъ.



Тип. И. Маргиросіанца, Орб. ул., д. 1, 2.



## Ռ Ո Ւ Ի Ն Զ Օ Ն

1.

Համբուրգ քաղաքում տպրում էր մի հա-  
րուստ վաճառական. նա ունէր երեք որդի:  
Աւագ որդին զինուոր դարձաւ և Ֆրանսիացիք  
սպանեցին նրան պատերազմում: Միւս որդին  
զնաց ուսում առնելու, հիւանդացաւ մեռաւ:

Կենդանի մնաց միայն փոքր որդին, որի  
անունն էր Ռորինդօն: Հայրն ու մայրը շատ  
սիրում էին նրան և երես էին տալիս: Ռորին-  
դօնը չէր ուզում սովորել. ծնողներն էլ չէին  
ստիպում, և նա ինչ ուզում էր՝ անում էր:

Փոքրիկ Ռորինդօնը մեծացաւ. Հայրն ու  
մայրը չզիտէին, թէ ինչ գործի դնեն նրան:  
Հայրը կամենում էր, որ նա վաճառական դառ-  
նալ. իսկ Ռորինդօնն ասում էր. «Չեմ ուզում  
վաճառական դառնալ, ուզում եմ հեռու տե-  
ղեր գնալ, օտար աշխարհներ տեսնել»:

Հայրը չէր լօժարում և ասում էր որդուն.  
«Գեռ ինչ իսելք ունիս, որ կարողանաս ճանա-

պարհորդել»: Իսկ մայրն ասում էր. «Սիրելի որդեակ, օտար երկիրներ որ գնաս, սով կընայէ քեզ այնտեղ. միթէ չես մեղքանում հօրդ ու մօրդ, որ կամենում ես հեռանալ մեզնից»:

Մի օր Ռոբինզօնը ծովափի դնաց ման դալու և տեսաւ այնտեղ մի բարեկամ: Բարեկամը նաւապետի որդի էր և պատրաստվում էր իւր հօր հետ Լօնդօն գնալու: Եւ նա ասաց Ռոբինզօնին. «Ուզո՞ւմ ես, եկ միասին Լօնդօն գնանք»: Իսկ այնտեղ հասնելու համար պէտք էր անցնել մի մեծ ծով, որ Գերմանական ծով է կոչվում: Ռոբինզօնն ասաց. «Ջատ կ'ուղէի գալ, բայց հայրս ու մայրս չեն թողնիլ»: Բարեկամն ասաց. «Ի՞նչ ես վախենում. մենք շուտով կըվերագառնանք և չետոյ կըպատմես ծնողներիդ, թէ ո՞ւր էիր և ինչէր տեսար»: Ռոբինզօնն ասաց. «Ի՞նչպէս գնամ, որ փող չունիմ»: Բարեկամն ասաց. «Միամիտ կաց. ես իմ զրգանից կըտամ քեզ»:

Ռոբինզօնը մտածեց, մտածեց և ասաց. «Գէ լաւ—գնանք»:

Միւս օրը Ռոբինզօնը վաղ վերկացաւ, շորերը հագաւ, նաւ մտաւ, և նրանք գնացին: Իսկ ընկերը մարդ զրկեց Ռոբինզօնի հօրն ու մօրն ասելու, թէ նրանց որդին և ինքը Լօնդօն են գնացել երեք շաբաթով: Երբ նրանք

բոլորովին հեռացել էին Կիբրից, նաւապետը հրամայեց վեց անդամ թնդաճօթ արձակել. և Ռոբինզօնը շատ ուրախացաւ, որ ճանապարհ է ընկել: Օրը դեղեցիկ էր. ուղևորները գուարթ-գուարթ լառաջ էին նաւում: Երկրորդ օրը մի մեծ ու լայնատարած ծով մտան: Ռոբինզօնը զարմանում էր, որ իւր շուրջը ծովից ու երկնքից դատ՝ ոչ մի բան չէր տեսնում:

Երրորդ օրը մի սաստիկ քամի փչեց, երկինքը որստաց, փոթորիկ բարձրացաւ. սև սև ամպերից դետի պէս անձրև տեղաց. նաւաստները վախենալով որ ծովը կընկնին, ամեն մի բանից պինդ բռնում էին, կարծում էին թէ նաւը ջրի տակ կ'երթայ: Ռոբինզօնն էլ վախեցաւ. սիրտը չեա եկաւ,—կարծում էր թէ իսկոյն կըմեռնի: Նա սկսաւ լաց լինել և ասում էր. «Սիրելի ծնողներ, էլ չէք տեսնիլ ինձ. ինչո՞ւ թողի ձեզ»:

Իսկ քամին դնալով կատաղում էր. նաւի առագաստները պատըռտուել էին և նա չէր կարողանում լառաջ գնալ. տակն էլ ծակուել էր և ջուրը ներս էր վազում: «Սհա կորանք», գանչեցին ամենքը: Ռոբինզօնն այս աղաղակը լսեց թէ չէ, մեռելի պէս վայր ընկաւ: Ամենքը սկսան նաւի միջից դուրս թափել ջուրը, որ նա չընկղմի: Նաւաստներից մէկն էլ

ասաց Ռորինդօսին. «Ի՞նչ ես պառկել. չե՞ս տեսնում, որ բոլորս գործի վրայ ենք. մենք շան պէտ յօգնեցանք ջուրը թափելով, իսկ դու պառկել ես»:

Ռորինդօրը հազիւ հազ վերկացաւ ու սկսաւ ջուր կրել: Այն միջոցին նաւապետը հրամայեց թնդանօթ արձակել, կարծելով թէ գուցէ մօտերքում ուրիշ նաւեր կըլինին, կըլսեն կ'օգնեն: Իսկ Ռորինդօսը թնդանօթի բոմբիւնը որ լսեց, կարծեց թէ նաւը խորտակուել է, և նորից վայր ընկաւ շնչասպառ:

Բայց սրբան ջուրը դուրս էին թափում, այնքան էլ շատանում էր: Ամենքն էլ կարծում էին, թէ նաւը կըխեղդուի. ուստի նրան թեթեւութիւն տալու համար՝ բոլոր թնդանօթները, տակառներն և ուտելու պաշարները ծովը նետեցին:

Այս նաւից փոքր ինչ հեռու մի ուրիշ նաւ էր անցկենում. երբ նրա վրայի մարդիկը թնդանօթի որոտմունքը լսեցին, նրանց նաւապետը մի մեծ մակույկ արձակեց: Մակույկը չէր կարողանում Ռորինդօսի նստած նաւին մօտենալ: Հազիւ հազ կարողացան նրա վրայից մի պարան ձգել եկող մարդկանց. սրանք իսկույն պարանի ծայրից բռնեցին. նաւի մարդիկն էլ պարանից քաշելով, իրենց մօտեցրին մակույկը:

Այն ժամանակ ամենքն սկսան մակույկի մէջ թռչկոտել. Ռորինդօսին էլ գլորեցին, որովհետեւ ոչինչ չէր գղում և մեռելի նման բան էր դարձել: Մակույկը նաւի մօտ տարաւ նրանց, և բոլորը մահաց փրկուելով ուրախացան:

Լօնդօն որ հասան, Ռորինդօսը կամեցաւ տեսնել, թէ ինչ քաղաք է, և կէսօրին դնաց իրեն բերող նաւապետի մօտ ճաշելու:

Ճաշի ժամանակ նաւապետն ասաց Ռորինդօսին. «Ի՞նչ բանի համար ես Լօնդօն եկել — արդեօք գործ ունիս, թէ հայրդ է զրկել»:

Ռորինդօսն ասաց. «Այտեղ ես գործ չունիմ. հօրեցս թաքուն եմ հեռացել»:

Նաւապետը բարկացաւ Ռորինդօսի վրայ և ասաց. «Ռորինդօս, լաւ չես արել որ հօրեցդ փախել ես: Վերագարձիր և դնա ներողութիւն խնդրիր նրանից»: Եւ փող տուաւ Ռորինդօսին:

Ռորինդօսը նաւահանգիստ գնաց և սկսաւ մտածել, թէ «Հօրս աչքին ինչպէս երևանամ»: Այնտեղ նրան մի մարդ պատահեցաւ: Ռորինդօսը նրան հարցրեց. «Վարելի չէ՞ արդեօք Համբուրգ գնացող մի նաւ ճարել»: Մարդն ասաց. «Չէ, Համբուրգ գնացող նաւ չկայ»: Եւ այդ մարդը մի նաւատէր էր և շուտով Գվինէա պիտի գնար: Գվինէան Աֆրիկայումն է:

Ռորինդօսն ասաց նրան. «Իսկ դու ո՞ւր ես

գնում»։ Նաւատէրն ասաց. «Հեռու տեղ եմ գնում — Աֆրիկա. այնտեղ մի երկիր կայ, անուէն է Գլինէա, և մէջը սև-սև մարդիկ են բնակվում»։ Ռոբինզօնն ասաց. «Այդ երկիրը Հեռու է»։ Նաւատէրն ասաց. «Հեռու է. ուղում ես, միասին գնանք»։ Ռոբինզօնն ասաց. «Ես փող չունիմ»։ Նաւատէրն ասաց. «Ես իմ գրպանից կրտամ քեզ. իսկ դու կացիներ, գանակներ, գոյն գոյն ապակիներ կրգնես»։ Ռոբինզօնն ասաց. «Ինչացու են այդ բոլոր բաները. գրանք ինձ հարկաւոր չեն»։ Նաւատէրն ասաց. «Գնիր, սև մարդիկն այդ բաներից ոչինչ չեն հասկանում և գրանց փոխարէն շատ ոսկի ու փղօսկր կրտան քեզ»։ Ռոբինզօնն ասաց. «Փրղօսկրն ինչիս է պէտք»։ Նաւատէրն ասաց. «Փրղօսկրն սպիտակ է և շատ փող կ'արժէ»։ Եւ Ռոբինզօնն ասաց. «Լաւ, գնանք»։

Նրանք նաւ նստան ու գնացին։ Երկար նաւեցին, մի երկիր տեսան։ Ռոբինզօնը հարցրեց. «Այդ ինչ երկիր է»։ Նաւատէրն ասաց. «Գա Մադէրա կղզին է. մէջը լաւ զինի են պատրաստում, շատ էլ կանարեան թռչուններ կան, որոնք սիրուն սիրուն երգում են»։ Ռոբինզօնն ասաց. «Այդ կղզին կ'երթանք թէ չէ»։ Նաւատէրն ասաց. «Կ'երթանք, որովհետև այնտեղ նաւս նորոգելու եմ»։

Նաւի բոլոր մարդիկը ցամաք իջան և Ռոբինզօնը գնաց կղզու վրայ ման գալու։ Այնտեղ շատ խաղող կար. Ռոբինզօնն այնքան կերաւ, որ հազիւ հազ չէտ եկաւ։ Նաւատէրը նրան ասաց. «Ռոբինզօն, այժմ դու գնա, ինչքան կ'ուզես ման եկ—ես նաւս պիտի նորոգեմ»։

Ռոբինզօնն երեք օր մնաց այնտեղ և ձանձրացաւ։ Երբորդ օրը ծովափ գնաց, սկսաւ յառաջ նայել և մի նաւ նկատեց, որ ուղիղ զալիս էր գէպի կղզին։ Նաւը որ հասաւ, Ռոբինզօնը հարցրեց նաւապետին, թէ «Ուր էք գնում»։ Նաւապետն ասաց. «Մենք նաւում ենք Բրազիլիա»։ Ռոբինզօնն ասաց. «Բրազիլիան ինչ բան է»։ Նաւապետն ասաց. «Գա մի Հեռաւոր երկիր է և գտնվում է Ամերիկայում։ Այնտեղ վայրենի մարդիկ են բնակվում և այն երկիրը շատ հարուստ է ոսկէ աւազով ու պատուական քարերով»։ Ռոբինզօնն ասաց. «Արի ինձ էլ հետդ տար»։ Նաւապետն ասաց. «Ինչու չէ—եկ գնանք»։ Եւ գնացին։

Մի քանի օր նրանք յաջող նաւեցին. լետոյ փոթորիկ բարձրացաւ։ Այս փոթորիկը վեց օր տևեց, և նաւապետը չզրտէր, թէ նաևն ուր է ընկել։

Մի օր լանկարձ ամենքը գանչեցին. «Երկիր, երկիր, երկիր է երևում»։ Հէնց որ այս

ասացին, նաւը գորդուելով քարի դիպաւ, տակը ճեղքուեցաւ և ջուրը ներս վազեց: Բոլորն էլ սկսան լաց լինել, աղաղակել, պատէ պատ ընկնել—չղիտէին, ինչ անեն: Յետոյ մի մեծ մակոյլ իջեցրին, մէջը նստան և դէպի եզերքը վարեցին: Իսկ ջուրն անդադար գալիս թափվում էր մակոյլի վրայ: Վերջապէս վրայ հասաւ մի մեծ ալիք և շուռ տուաւ մակոյլը: Միջի բոլոր մարդիկը ծովն ընկան, ճիկ հանելու ժամանակ էլ չունեցան:

2.

Ամենքը խեղդուեցան. ալիքները միայն Ռոբինզոնին ափի վրայ ձղեցին: Երկար ժամանակ նա մեռելի նման պառկած էր. երբ աչքերը բաց արաւ, տեսաւ որ մենակ է. բոլորը խեղդուել էին, նաւն էլ ընկղմել էր: Չատ ցաւեցաւ, որ ընկերները խեղդուել են, և լաց եղաւ: Յետոյ աղօթք արաւ և զնաց տեսնելու, թէ այն ինչ երկիր է, ուր որ ընկել էր: Ման եկաւ դէս ու դէն, տեսաւ որ այնտեղ ոչ հաց է բուսնում, ոչ էլ տներ կան, և դող ընկաւ սրտի մէջ: Նստաւ ու մտածեց. «Այժմ ես կրմեռնեմ սովից և կամ թէ վայրենի դազաններն ինձ կ'ուտեն», — և նորից լաց եղաւ: Յե-

տոյ քունը տարաւ. վախենում էր գետնի վրայ պառկել, որ գազանները չուտեն իրեն. նա բարձրացաւ մի ծառի վրայ, ճիւղերից բռնեց և այնպէս քուն եղաւ:

Եւ երազ տեսաւ, իբր թէ տանն է, հալըն ու մայրը լաց են լինում և բոլորովին մաշուել են վշտից. նա ինքն էլ լաց եղաւ ու զանչեց. «Ես այտեղ եմ...»: Հէնց որ զանչեց, քնած տեղը շուռ եկաւ և վայր գոյրուեցաւ: Ծառը բարձր չէր, տակը փափուկ խոտ էր բուսնում, և Ռոբինզոնը շատ ցաւ չրգաց:

Լուսադէմին ծառից վայր իջաւ. շատ անօթի էր. արդէն երկու օր է, բան չէր կերել: Սկսաւ լաց լինել, գետնի վրայ ընկաւ և ասաց. «Ինչո՞ւ ես էլ չխեղդուեցայ. հօ բոլորը մէկ է—չէ որ սովից կրմեռնեմ»: Գլուխը վերցրեց, մի բազէ տեսաւ՝ բերանումը ձուկ բռնած, և ասաց. «Ինչո՞ւ եմ արտասուք թափում. Աստուած թրջնսին կերակրում է, ինձ էլ ուտելու բան կըտայ», և սիրտը թեթեւացաւ:

Ծովափի զնաց. այնտեղ շատ խղոււճներ կային. մէկը քարով կտարեց, համը տեսաւ—վատ չէր, և այնքան կերաւ, որ կշտացաւ: Կշտանալուց լետոյ՝ ման գալու գնաց և մի պարզ վտակ տեսաւ—լսեց ջրից և շնորհակալ եղաւ Աստուծուց սովամահ չլինելուն համար:

Երբ զիշերը վրայ հասաւ, նորից վախ զգաց, սկսաւ նորից լաց լինել ու մտածեց. «Յալորը մէկ է, սալից չմեռաւ. բայց այժմ վայրենի մարդիկ կըղան, ինձ կըսպանեն»: Այսպէս մտածելով ծառի վրայ բարձրացաւ, կապեց ինքն իրեն մի հաստ ճիւղից և քուն եղաւ:

Առաւօտեան վայր իջաւ, մի մեծ դաւազան կտորեց ծառից և ելաւ մի բարձր բլրի վրայ, որ տեսնէ, թէ ինչ մարդիկ և կամ ինչ զիւղեր կային այնտեղ: Բլուրը ժայռոտ էր. Ռորինդօնը դժուարութեամբ էր բարձրանում: Չորս կողմը որ նայեց, տեսաւ որ ինքը մի կըղ-ղու վրայ է, շուրջն էլ ծով: Կղզին մեծ էր, բայց վրան ոչ զիւղ կար, ոչ քաղաք. միայն լեռներ, անտառներ ու դաշտեր էին երևում— ուրիշ ոչինչ:

Եւ Ռորինդօնը մտածեց. «Ի՛նչպէս անեմ, որ մի խրճիթ շինեմ ինձ համար»: Այ կացին ունէր, ոչ սղոց: Մտածեց, մտածեց, տեսաւ որ այնտեղ ուռենու նման մատղաշ ծառեր են բուսնում: Աւրախացաւ և ասաց. «Այս ծառերը կըքաղեմ, մի բակ կըշինեմ, և ոչ ոք չի տեսնիլ, որ այնտեղ մարդ է բնակվում»:

Երբ ծառերն արմատով զետնից հանելու վրայ էր, մի նեղ մուտքով քարայր տեսաւ սարի տակ— դա որջի պէս մի բան էր: Եթէ նա բահ

ուռենար, հէնց այնտեղ իւր համար մի բնակարան կըլիւրէր: Բահ չուներ. սկսաւ ձեռքերով պոկտել ճիւղն ծառերն ու որջի շուրջը տնկել: Ամբողջ տարին ձմեռ չէր լինում այն կղզու վրայ և օդը միշտ տաք էր: Ռորինդօնն աշխատելուց յոգնեցաւ և նստաւ որ հանգստանայ: Յանկարծ մի ձայն հասաւ նրա ականջին. գնաց տեսնելու, թէ ինչ էր, և տեսաւ— մի կարկաջուն աղբիւր էր: Աւրախացաւ և ասաց. «Ա՛յ լաւ բան. ջուրն ինձանից մօտիկ կըլինի»: Բալոր օրը ծառեր տեղափոխելով անցկացրեց. երեկոյեան ծառի վրայ ելաւ, գօտով կապեց իւր իրանը ծառի ճիւղին և քուն եղաւ:

Առաւօտեան վերկացաւ և գնաց խղուճ որոնելու ծովափի վրայ: Աւրիշ ձանապարհով գնաց և մի ահագին ծառ տեսաւ, վրան էլ դգումի նման մեծ-մեծ պտուղներ: Պոկեց մինը. կճեպը կարծր էր: Ռորինդօնը քարով կտրեց նրան— միջուկը փափուկ էր ու համեղ, և չորս հատ կերաւ: Այս պտուղները կոչվում են կոկոսի կաղին, իսկ ծառը՝ կոկոսի արմաւ: Կշտանալուց լետոյ Ռորինդօնը ծովափ գնաց ու ոտքէներ հաւաքեց: Յետոյ բահի նրման մի քար գտաւ, հետն առաւ, և այն օրից նրա աշխատանքն աւելի արագ յառաջ գնաց:

Մի օր մինչ նա ծովափ էր գնում սուրճ-  
ներ սրոնելու, կանեփի նման մի բոյս տեսաւ.  
Քաղեց բոյսը, ջրով թրջեց, լետոյ չորացրեց  
և սկսաւ չուան հիւսել: Այդ չուանով մի սուր  
քար կապեց փայտի ծայրին, և բահ շինեց:

Այժմ նա սկսաւ աւելի շուտ բանել. եր-  
կու շարք ծառեր տնկեց, ոտներով հիւսեց, մէջ  
տեղը հող ածեց և մի ամուր ցանկ պատեց քո-  
րայրի շուրջը: Ծառերն ա՛նն օր ջրում էր, որ  
արմատ բռնեն ու դալարին: Յանկի մէջ մի  
գուռ կտրեց, չուանից մի սանդուղք հիւսեց,  
սանդուղքն իւր բնակարանի կտրին կանդնած  
ծառին կապեց և երբ կամենում էր ցանկի  
միւս կողմն անցկենալ, այդ սանդուղքով էր  
բարձրանում:

Յետոյ Ռորինգօնը ծովափ գնաց և այնտեղ  
տապարի նման ծակ ունեցող մի քար գտաւ:  
Այդ քարը փայտի վրայ անցկացրեց, չուանով  
կապեց և իսկական կացնի նման բան շինեց,  
լետոյ էլի երկու հատ քար գտաւ—մինը մուր-  
ճի նման էր, միւսը՝ սեպի: Այդ բոյսըը հետն  
առաւ, տուն տարաւ և սկսաւ քարեր գուրս  
հանել քարայրից, որ նա աւելի մեծ և արձակ  
լինի: Յետոյ շատ խոտ քաղեց, չորցրեց, քո-  
րայրի մէջ փռեց, իւր համար անկողին պատ-  
րաստեց և լաւ քուն եղաւ, որովհետև մինչև

այն ժամանակ միշտ ծառերի վրայ էր քնել  
թռչնի պէս:

3.

Այսպէս ապրում և ապրում էր Ռորինգօնը  
իւր կղզու վրայ: Ծառերի վրայ գտնուած բո-  
լոր կոկոսի կաղիններն արդէն կերել էր և նոր  
սնունդ ձարելու հնար էր մտածում: Բակից  
գուրս գնալ վախենում էր, կարծելով թէ կրղ-  
զու վրայ վայրենի մարդիկ կամ թէ գաղաններ  
կրլինին: Բայց երբ սաստիկ քաղց զգաց,  
գուրս ելաւ, որ ուտելու բան որոնէ: Գրտում  
արևը նրա գլուխն այրում էր: Ռորինգօնը վե-  
րադարձաւ և ասաց. «Ե՛կ ինձ համար մի հո-  
վանոց շինեմ»: Մի հատտ փայտ առաւ, ծայ-  
րից բարակ ուռերով ճիւղեր կապեց, վրան կո-  
կոսի տերևներ դրաւ և տերևները ձկան փշե-  
րով ամրացրեց ճիւղերին: Այս փշերը հաւաքել  
էր ծովափին. ծովը շատ ձկներ էր գուրս ձը-  
գում. նրանք փտում էին, իսկ ոսկորները մնում:  
Յետոյ մի պարկ հիւսեց թոկերից, որ ձանա-  
պարհին գտած պտուղները մէջը դնէ: Քանի  
որ հովանոցն ու պարկը շինելու վրայ էր, արևը  
մայր մտաւ, և նա քնեց առանց մի բան ու-  
տելու, անօթի:

Առաւօտեան վաղ վերկացաւ, պարկն ուսից կախեց, գօտկի տեղ՝ մէջքին թուկ կապեց; տապարը գօտկի մէջ անցկացրեց, հովանոցն առաւ և զնաց սնունդ պտրելու: Դաշտով էր զնում, վախենում էր մօտենալ անտառին — կարծելով թէ այնտեղ վայրենի մարդիկ կըլինին: Չատ ման եկաւ, բայց ոչ մի բան չէր պատահում նրան. էլի լառաջ զնաց, թուփեր նշմարեց. մօտեցաւ, տեսաւ որ նրանց վրայ կանաչ հատիկներ կան. համը տեսաւ, համեղ չէին, ուտել չէր կարելի: Բարկացաւ և թուփերից մինը արմատով քաղեց. այն ժամանակ տեսաւ, որ արմատի վրայ էլ հատիկներ կան, աւելի խոշոր, բայց ոչ կանաչ: Ճաշակեց — դրանք էլ անհամ էին. այնու ամենայնիւ վերցրեց այդ հատիկներից մի քանիսը, պարկը զրաւ և ասաց. «Պէտք կըզան»: Դրանք էին գետնախնձորներ: Ռորինգօնն էլի շատ ման եկաւ և մի ծառի վրայ խնձորի նման դեղին ու թթու պտուղներ գտաւ. դրանք էին կիտրոններ. այդ պտուղներից էլ քաղեց ու պարկի մէջ ձգեց: Երկար ման գալուց յոգնեցաւ և նստաւ մի աղբիւրի մօտ, որ հանգստանալ ու բան ուտէ: Հէնց որ նստաւ և կոկոսի կաղինը կտրելու վրայ էր, մի շուինդ լսեց. վախեցաւ ու վայր ձգեց կաղինը: Երբ չորս կողմը

մտիկ արաւ, նկատեց որ ձայն հանողները մի տեսակ կենդանիներ են. գրանք եկել էին ջուր խմելու աղբիւրից: Այգալիսի կենդանիներ դեռ երբէք չէր տեսել, որովհետեւ նրանք ապրում են միայն տաք երկրներում: Մարմնով եղջերուի նման են և ձիի գլուխ ունին: Կոչվում են լամա:

ստոր  
տեղ  
տեղ  
տեղ

Լամաներ տեսնելիս Ռորինգօնը լիշեց, որ վազուց միս չէ կերել, և կամեցաւ մի լամա սպանել: Թաք կացաւ ծառի ետև և երբ լամաներից մէկը ծառին մօտեցաւ, քարէ տապարով խփեց գլխին ու սպանեց: Սպանեց ու միտք արաւ. «Ինչպէս ուտեմ սրան. հում միս ուտել կարելի չէ. պտուկ չունիմ, որ կարողանամ եփել, կրակ էլ չունիմ»: Չալակեց որսն և տուն տարաւ:

Ճանապարհին նա լիշեց, ինչ որ լսած էր հայրենիքում, թէ վայրենի մարդիկ կրակ ձարելու համար երկու կտոր չոր փայտ են վերցնում և այնքան քսում մէկը միւսին, մինչև որ վառուին: Եւ այս լիշելով Ռորինգօնն ասաց. «Տուն որ հասնեմ, ես էլ այդպէս կրակ կըվառեմ»: Տուն եկաւ, լամայի փորտիքը հանեց, կաշին չորացնելու համար արեւին կախեց, միսը խորովելու շամփուր շինեց, փայտ երկու կտոր փայտ վերցրեց և սկսաւ քսել:



կը միւսին, բայց չկարողացաւ կրակ հանել: որովհետեւ կրակ հանելու համար պէտք էր երկար քսել, իսկ նրա ոյժը չէր հասնում: Այն ժամանակ լիշեց, որ մի քանի ազգեր միտը թամբի տակ տրորելով՝ հում հում են ուտում: Գնաց երկու տափակ քար գտաւ. մէկի վրայ դրաւ միտը, միւսով սկսաւ թակել. թակուելուց միտն այնքան տաքացաւ, որ արդէն կարելի էր ուտել: Ռորինգօնը մտի վրայ կիտրոն քամեց և միտը շատ համեղ դարձաւ:

Ուտելուց չետոյ Ռորինգօնը մտածեց, թէ ինչ պիտի անէ, երբ ձմեռը վրայ հասնի: Չզիտէր որ այն կողմերը ձմեռ չէ լինում, և ասաց. «Վաղը որտի կ'երթամ, լամաներ կրբռնեմ և նրանց մորթուց մուշտակ, տաք կոշիկներ, գրտակ կըշինեմ ինձ համար. այն ժամանակ ցուրտից չեմ վախենալ. լամաներն էլ հեղ են — նրանց բռնելը գժուար չէ»:

Միւս օրը Ռորինգօնը կամենում էր որսի գնալ: Գլուխը քարայրից դուրս հանեց թէ չէ, տեսաւ որ յորդ անձրև է գալիս: Ազգեց. սպասել մինչև որ անձրևը դադարի, բայց դա քանի դնում, սաստկանում էր: Յետոյ մըրիկ բարձրացաւ, կայծակը փայլատակեց և ամպերն այնպէս որոտացին, որ գետինը գըրգուեցաւ: Ռորինգօնը մըրկից վախենալով, քարայրի մէջ

գաւձ եկաւ և սպասում էր, որ փոթորիկն անցկենայ: Երբ որ ամպերի գուռւմը՝ դադարեց, Ռորինգօնը դուրս եկաւ քարայրից և ուզեց որտի գնալ: Յոնկարծ կայծակը նորից փայլատակեց և շանթն այնպէս սաստիկ ճալթեց, որ Ռորինգօնը դետնի վրայ փռուեցաւ՝ բոլորովին ուշաթափ: Աւշքի գալուց չետոյ տեսաւ, որ քարայրի մօտերքում ցիր ու ցան սօտեր ու ճիւղեր են ընկած. դրանք թափուել էին քարայրի կարին կանգնող ծառերից. կայծակը նրանց ջախջախել էր: Եւ Ռորինգօնը մտածեց. «Այժմ ինչպէս կապեմ սանդուղքս. ծառը չկայ, կապելու տեղ էլ չկայ»: Անձրևն արդէն բոլորովին դադարել էր: Ռորինգօնը քարայրից վայր իջաւ և շատ ուրախացաւ, տեսնելով որ ծառը կայծակից բռնկել է և այրվում է: Նա վեր առաւ մի խանձող և իւր մօտ կրակ վառեց. չետոյ անցկացրեց միտը մի օր աւաջ շինած շամփրին ու սկսաւ կրակի վրայ պտոյտ տալ: Երբ միտը խորվեցաւ, ծովափ վազեց, կոկոսի կճեպով ջուր քաշեց ու բերաւ մտի վրայ ածեց, և միտն աղիացաւ, որովհետեւ ծովի ջուրն աղի է: Կուշտ ուտելուց չետոյ՝ Ռորինգօնը մտածեց. «Ի՛նչ անեմ որ այս կրակը վառ պահեմ. այս բանը չէ կարելի քարայրում անել. քարայրը փոքր է և այստեղ ծուխը կըխեղդէ

ինձ: Բակի մէջ որ պահեմ, անձրև կըղայ, կը հանգցնէ. . . Եկ մի վառարան շինեմ»: Յիշեց որ ծովափ գնալիս կաւ էր տեսել, և զնաց այն կաւից բերելու: Կաւն անձրևից թրջուել էր: Ռորինգօնը շաղախեց այդ կաւը, աղիւսներ շինեց և արևին զրաւ, որ չորանան: Յետոյ տուն եկաւ ճաշեց, և սիրտը նեղացաւ:

«Գոնէ մի շուն կամ թէ կատու ունենայի», մտածեց նա:

Չորս կողմը նայեց ու տեսաւ որ վերևում սարդը ոստայն է մանել. ճանձեր տուաւ նրան, որ ուտէ, և շատ ուրախ էր, որ իւր հետ մի սարդ է բնակվում:

Յետոյ բակ զնաց վառարանի համար փոս փորելու. փորելիս մի մեծ կտոր ոսկի գտաւ և ասաց ինքն իրեն. «Ինչիս է պէտք այս ոսկին. այստեղ մարդիկ չեն բնակվում, որ ես սրանով բան գնէի: Երանի՛ թէ երկաթ լինէր գտածս. այն ժամանակ ես ինձ համար մի կացին և կամ դանակ կըշինէի»:—Վեր առաւ ոսկին ու գէն ձգեց:

4.

Միւս օրը Ռորինգօնը վաղ վերկացաւ, կրակի մէջ փայտ ձգեց և ուզում էր մնացած միսն էլ խորովել. բայց միսը տաքութիւնից փչացել

էր, և Ռորինգօնն այն օրը միտ չկերաւ: Կորից ուզեց որսի գնալ և իւր պարկը վերցնելիս՝ մէջը գետնախնձոր գտաւ: Այդ գետնախնձորը կրակի մէջ ձգեց, յուսալով որ նրանից բան դուրս կըղայ. յետոյ աղիւսներ շինելու զնաց և շատ աղիւսներ շինեց: Յոգնեցաւ և ծովափ զնաց հանգստանալու ու ոտքներ օրոնելու. այնտեղ, աւաղի վրայ, նա նշմարեց մի կենդանի, որ տակից էլ, վրայից էլ հաստ կեղևով պատած էր և չորս ոտք ու մի զըլուխ ունէր. ինքը կլոր էր: Գա էր մի կրի աչ: Կենդանին երկու փուզի չափ ծանր էր, և Ռորինգօնը հաղիւ կարողացաւ տուն տանել նրան: Տուն որ բերաւ, կեղևը տապարով պատառեց, միջի միսը հանեց, խորվեց ու կերաւ. մնացածըն էլ ծովի ջրով սրսկեց, որ տաքութիւնից չբիչանայ:

Այդ միջոցին Ռորինգօնը լիշեց, որ կրակի մէջ գետնախնձոր էր զրել. հանեց նրան, համը տեսաւ—շատ համեղ էր, և սաստիկ ուրախացաւ, որ կարելի է գետնախնձորը հացի տեղ ուտել: Գեռ չէր կարողանում թոնիր շինել, որովհետև աղիւսները չորացած չէին: Կամենում էր որսի գնալ և ասաց ինքն իրեն. «Հապա միսն ուր գնեմ»,—և սկսաւ նրան չորացնելու հնար մտածել: Վճռեց որ կարելի էր չորացնել միսը, թոնրի մէջ կախելով:

Ռորինգօնը ձանձրացաւ սարդից, և ուղեց մի ուրիշ կենդանի գտնել իւր համար:

«Ի՞նչ լաւ կրկինէր, եթէ կարողանայի մի լամայ բռնել և ընդելացնել»:

Նա մի երկաջն չուան ուրեց, ծալրից օղակ շինեց և ուզում էր որսի զնալ աղբիւրի մօտ, ուր լամաները գալիս էին ջուր խմելու: Չուանը պատրաստելուց լետոյ՝ զնաց լուացուելու ծովի ջրում, շապիկը հանեց և տեսաւ, որ կեղտոտուել ու ծակոտուել է: Լուաց շապիկը, լետոյ կախեց որ չօրանայ, և ջուրը մտաւ: Նրա յոգացած տեղում շատ ձկներ կային. կարելի էր ձեռքով բռնել, իսկ ուռկանով կարելի էր մէկ անգամից հազար հատ բռնել: Ռորինգօնը ջրից դուրս ելաւ, շապիկը հաղաւ և տուն գնաց:

Հետեւեալ օրը վաղ վերկացաւ, դօտին կապեց, պարկի մէջ խորված գետնախնձորներ ու մի կտոր կրիալի միս գրաւ և զնաց լամաներ բռնելու:

ձանապարհին տեսակ տեսակ թռչուններ էին պատահում նրան, և նա ուղեց գոնէ մի հատ թռչուն բռնել և իրեն ընդելացնել: Թռչունը սիրուն թռչուն է և կարող է խօսել, եթէ սովորեցնես: Ռորինգօնը լաւ դէս ու դէն էր նայում, որ թռչունը գտնէ, բայց չէր

գտնում. ճեր թռչուն բռնել անկարելի է— շատ խորամանկ է: Թռչունի փոխարէն Ռորինգօնը աղ դտաւ: Ափի վրայ ծովի ջուր էր հաւաքուել քարերի մէջ. ջուրն արեւից ցամաքել էր և տակը աղ էր գոյացել: Այս աղով նա պարկը լցրեց և զնաց լամաներ որսալու: Նրստաւ մի ծառի տակ և սպասում էր որ լամաները ջուր խմելու գան: Երբ բոլոր երամակը վազելով ջուր խմելու եկաւ, լամաներից մինը մօտեցաւ այն ծառին, որի ետեւ թաք էր կացել Ռորինգօնը: Ռորինգօնը ձգեց նրա վրայ չուանի օղակն ու վրից քաշելով դէպի քարայրը թրեց. լամայի ետեւից վազելով գալիս էին երկու հատ փոքրիկ ուլեր: Ռորինգօնը չկարողանալով ուլերի հետ միասին լամային էլ ցանկի միւս կողմը անցկացնել, մի ծառի կապեց նրան: Յետոյ փոքրիկ ծառեր կտրտեց, տնկեց և այսպէս մի փոքրիկ փարախ շինելուց լետոյ՝ լամային և երկու ուլերին այնտեղ քշեց: Այնուհետեւ նա մի կողմից քանդեց ցանկը, բակը մեծացրեց, լամաներին այնտեղ քշեց և խոտ տուաւ որ ուտեն: Նա շատ ուրախ էր, որ այժմ մենակ չէ:

Լաման և ուլիկները շուտով ընդելացան նրան. նա իւր ձեռքով խոտ էր տալիս նրանց, նրանք էլ չէին վախենում: Ուլիկները շուտով գազարեցան մօր ծիծն ուտել և Ռորինգօնն

սկսաւ կ'թել նրան ու կարագ շինել նրա կաթից:

Սարգին էլ չէր մոռանում, ամեն օր ճանճերով կերակրում էր:

Ռոբինզօնը կամեցաւ այժմ կոկոսներ տընկել. իւր կոկոսի կաղիններն արդէն վերջացել էին: Նա առաւ վերջին հինգ հատը, զետին թաղեց և կարճ միջոցում փոքրիկ կոկոսներ սրտան հօղից:

Լամաները Ռոբինզօնին ընդելանալով շան պէս հլու դարձան և ծանր ծանր բռններ էին կրում նրա համար. նա մի քանի հատ կողով հիւսեց ճիւղերից և այս կողովները զոյգ-զոյգ կապում էր և լամաների մէջքից կախում:

Աղիւսները որ չօրացան, Ռոբինզօնն սկսաւ թոնիր շինել. շատ չանցած, թոնիրն էլ արդէն պատրաստ էր:

5.

Մի երեկոյ Ռոբինզօնն ընթրիք արաւ և զնաց քնելու. լամաներն էլ իւր կշտին պաակեցան:

Հէնց որ քնի էր զնացել, նրա տակ մի բան թնդաց, ասեա թէ որոտ լինէր, և երկիրը զղրկուեցաւ: Ռոբինզօնը վեր թռաւ, դուրս վաղեց քարայրից, լամաներն էլ ետևից վաղե-

ցին—զետինը թնդում ու տատանվում էր: Ռոբինզօնը բակից դուրս վաղելիս՝ տեսաւ որ սարի լանջը պտտուել է և միջից կրակ ու ծուխ է բարձրանում, քար ու մոխիր է դուրս թռչում և հրեղէն զետի նման բան է հոսում: Գա լաւա էր: Լաւան գոլանում է հալուած ծծմբից, ալբորակից, կրից և հոսելիս վառվում է: Ռոբինզօնը դարհուրեցաւ ու սկսաւ աւելի մեծ շտապով փախչել.—լամաներն էլ ետևից: Փոթորիկն այնպէս սաստիկ էր, որ Ռոբինզօնի շունչը բռնվում էր վաղելիս:

Այն օրուայ անձրևի պէս յորդ անձրև նա իւր օրում չէր տեսել. ջուրը հեղեղի պէս էր վայր թափվում: Նա ինքը մի ծառի վրայ բարձրացաւ. իսկ լամաները ջրի հոսանքով տարուեցան: Ռոբինզօնը շատ մեղքացաւ լամաներին, բայց վախենում էր ցած իջնել, որ չխեղդուի: Գետնաշարժն ու անձրևը որ դադարեցան, նա վայր իջաւ ծառից ու մտածեց. «Այժմ քարայրս էլ, ցանկս էլ փուլ եկած կըլինին, թոնիրս էլ քանդուած. իսկ լամաներս խեղդուեցան—ջուրը դէպի ծով տարաւ նրանց: Առանց բնակարանի և առանց լամաների դժուար կըլինի ինձ ապրել. նրանք ինձ կաթ էին տալիս»: Գուճ եկաւ ծառի տակ և այսպէս տխուր սրբտով մնաց այնտեղ մինչև առաւօտ: Լուսադէ-

մին քարայրը գնաց: Մօտեցաւ թէ չէ—  
լամաները վազելով իւր առջևն ելան: Նրանք  
լիզում էին Ռորինգօնի ձեռքերն և ուրախու-  
թիւնից ցատկոտում էին նրա շուրջը: Քարայրը  
փոքր ինչ փուլ էր եկել, իսկ թոնիրն ու ցան-  
կը անվնաս էին մնացել: Ռորինգօնն ուրախա-  
ցաւ, որ քարայրը շատ չէր վնասուել, լամա-  
նաներն էլ ողջ էին:

Ռորինգօնն շտապեց հանել քարայրից վաչր  
թափուած հողն ու քարերը և երբ որ բոլորովին  
մաքրեց նրան, քարայրն աւաջուանից աւելի  
մեծացաւ: Բայց սարդը չկար. Ռորինգօնը շատ  
պտրեց նրան, բայց չըզտաւ. նա մնացել էր հո-  
ղի տակ: Յետոյ Ռորինգօնը գնաց տեսնելու  
աչն տեղը, ուր սկսել էր կրակ գուրս զալ-  
կրակն արդէն մարել էր, բայց տաք լաւան  
գեռ վազում էր, և վազում շիտակ դէպի գետ-  
նախնձոր բուսած տեղը:

Ռորինգօնը կարծեց թէ գետնախնձորը այ-  
բուած կըլինի լաւայից. բայց տեսաւ որ չէ այ-  
բուած, որովհետև լաւան այնտեղ չէր հասել:  
Ղաւայի հետ լերան միջից շատ կրային քարեր  
էին ընկել. Ռորինգօնը հաւաքեց այդ քարե-  
րը, փշրեց և կիր ստացաւ. կիրը խառնեց ա-  
ւաղի հետ, աղիւս ստացաւ և սկսաւ քարէ  
պարիսպ շինել:

Ամեն բան նորոգելուց լետոյ պէտք եղաւ  
ձմերուայ համար մսի պաշար պատրաստել.  
Ռորինգօնն ութ հատ լամա և մի այծ բռնեց:  
լամաները մորթեց, իսկ այծին իւր լամաների  
հետ թողաւ. մորթածների միւր վառարանի  
վրայ չորցրեց: Այս ապուխտը քիչ թուեցաւ  
նրան և նա նորից գնաց լամա բռնելու,  
բայց չըբռնեց,—որովհետև լամաներն արդէն  
ճանաչում էին նրան և չէին մօտենում: Նա մի  
փոս փորեց, փոսն էլ ծածկեց ձիւղերով ու խո-  
տով: Երբ լամաները ջուր խմելու եկան, Ռո-  
րինգօնը լանկարծ հուշտ արաւ. լամաներն էլ  
խրտնեցին փախան. իսկ երկուսը փոսն ընկան:

Սարը մի տեղ փուլ էր եկել գետնաշարժից  
և մի քարայր էր կազմել: Ռորինգօնը այդ որ  
տեսաւ, ասաց. «Սա մի լաւ մառան կըլինի միտ  
պահելու համար. այնտեղ միւր չի փչանալ»:  
Ապուխտներն այնտեղ տարաւ ու պահեց:

Յետոյ շատ խոտ քաղեց և դէզ բարդեց  
իւր բակում. բայց խոտը խոնաւ լինելով տա-  
քացաւ, մխաց և քիչ էր մնում որ այրուէր:  
Այն ժամանակ Ռորինգօնն այդ խոտը դէն ա-  
ծեց. «Լամաներս այժմ ձմերուայ պաշար կ'ու-  
նենան, սոված չեն մեռնիլ»: Յետոյ փայտ կըտ-  
րեց, շատ գետնախնձոր հաւաքեց, ծառի վրայ  
եղած բոլոր կիտրոնները քաղեց—պատրաստեց

ամեն բան, ինչ որ պէտք էր, և սկսաւ ձմե-  
րուայ գալուն սպասել: Սակայն ձմեռը չէր գա-  
լիս: Ամեն օր անձրևում էր, բայց օդը չէր ջրը-  
տում, միշտ տաք էր:

Ռոբինզօնը, քարայրի մէջ նստած, ոչ մի  
տեղ չէր գուրս գալիս և մտածում էր, թէ ինչ  
անէ: Սկսաւ կաւից կճուճներ թրծել և շատ  
կճուճներ ու պուտուկներ, երկու լապտեր և մի  
հատ տապակ (թաւա) շինեց: Այս բոլորը որ  
շինեց, ասաց. «Ել մի ուռիան հիւսեմ ձուկ  
բռնելու համար». և սկսաւ բարակ չուան-  
ներից ուռիան հիւսել, և մի շաբաթում հիւ-  
սեց պրծաւ: Իսկ անձրևը գալիս ու գալիս էր, և  
Ռոբինզօնը չէր կարողանում բակից դուրս գալ:  
Կա նորից միտք արտա թէ. «Էլ ինչ շինեմ»: Քտածեց շինել աղեղ ու նետեր: Գնաց մի  
ձկուն փայտ ընտրեց, ծայրերը տապարով քեր-  
թեց, քերթերի վրայ երկու ծայրից չուան  
կապեց և սկսաւ ձկել. փայտը լաւ փայտ էր և  
շուտ ձկուեցաւ: Յետոյ նետեր շինեց, բայց եր-  
կաթ չուռէր, որ ծայրերին անցկացներ: Եւ  
մտածեց. «Գուցէ ձկան սոկորներից կարելի լինի  
սլաք շինել», — և մինչ ծովափ էր գնում ու-  
կորներ հաւաքելու, — գտաւ այն սոկին, որ  
հանել էր դետնից՝ թոնիր շինելիս: Հրեց ոտ-  
քով այդ սոկին և ասաց. «Անիճան սոկի. ին-

չնէ երկաթ չես, որ քեզնից սլաք շինելի նե-  
տերիս համար»: Աերցրեց սոկին ու դէն՝ ձգեց:  
Յետոյ ծովափ վազեց, սուր սուր քարեր հա-  
ւաքեց ու նետեր շինեց: Եւ նետերն այսպէս  
էին. մի ծայրի վրայ սոկոր էր, միւսի վրայ՝  
փետուր: Փետուրը նրա համար էր, որ նետերն  
ուղիղ թռչեն: Նետերից գատ՝ մի նիզակ էլ  
շինեց և երկաթի տեղ՝ ծայրից սուր քար անց-  
կացրեց:

Կճուճները որ չորացան, Ռոբինզօնը մտա-  
ծեց. «Ե՛կ, մէկի մէջ ճարպ դնեմ, պատրոյկ  
շինեմ, որ զիշերը քարայրիս մէջ լոյս լինի»: Չգեց ճարպը կճուճի մէջ և կրակի վրայ դրաւ  
որ հալուի. բայց երբ կճուճը տաքացաւ, բոլոր  
ճարպը դուրս վազեց միջից ու քամուեցաւ:  
Ռոբինզօնը մտածեց, թէ ինչ էր դրա պատ-  
ճառը, և լիշեց, որ կճուճն ապիկուած (չինած)  
չէր: Այն ժամանակ կճուճը վառ կրակի մէջ  
դրաւ, որ այրուի և ապակու նման դառնայ.  
բայց նա տաքութիւնից պայթեցաւ և փշուր-  
փշուր եղաւ: Ռոբինզօնը շատ ախոտաց և ա-  
սաց. «Կըսպասեմ մինչև որ անձրևները անցկե-  
նան. յետոյ բակիս մէջ կրակ կը վառեմ և այն-  
տեղ կրփորձեմ — գուցէ յաջողի»:

Ռոբինզօնն սպասեց անձրևների անցնելուն:  
Նրա շապիկն ու վարտիկը արդէն մաշուել

էին և չէր կարելի հազնել: Նրա բնակած կրղզոս վրայ օգր միշտ տաք էր. կարելի էք տկլոր ման դալ. բայց շատ էլ ճանճեր ու մոծակներ կային, և այնպէս էին կճում, որ բոլոր մարմինն ուռչում էր: Ռորինգօնն սկսաւ լամաների մորթուց կօշիկներ, վարտիկ ու շապիկ պատրաստել իւր համար: Քարէ դանակով կտրտեց մորթին. բայց չզիտէր թէ ինչպէս կարէր—ասեղ գերճան չունէր: Նա ծակոտեց մորթու կտորները, չուաններով կապկապեց, և այսպէս ունեցաւ մի կաբայ, մի վարտիկ և մի զոյգ տրեխ—բոլորն էլ լամաների կաշուց: Յետոյ մի զիմակ շինեց, վրան աչքերի ու բերանի համար ծակեր կտրեց, մի գլխաբլի էլ շինեց—վերը սուր ծայրով, և այս բոլորը որ հաղաւ, դարձաւ դադանի պէս մի բրդոտ բան, մարգու չընման: Իսկ հին շապիկ վարտիկը հանեց, լուաց, մի քարի վրայ փռեց քարայրում և ասաց. «Այս էլ մեճ տօներին կըհագնեմ»:

Անձրևը դադարելուց յետոյ՝ Ռորինգօնը ծովափ գնաց, սկսաւ ծովի վրայ նայել, և սիրտը տրտմեցաւ: Եզերքին նստաւ ու մտածեց. «Ինչպէս ապրեմ այտեղ մենակ: Գոնէ մի նաւ դար և գէպի տուն տանէր ինձ. . . Բայց նաւի մարդիկն ինչպէս իմանան, որ այտեղ մարդ կայ: Պէտք է մի նշան շինել»:

Քարայրը գնաց, հին շապիկն առաւ, մի երկայն փայտ կտրեց, շապիկը ծայրին կապեց, գետնին տնկեց և ասաց. «Քամին շապիկս կըծածանէ, նաւից կըտեսնեն և ետևիցս կրղան. . . Պէտք է մի բան գրել փայտի վրայ»: Եւ սուր քարով փորագրեց փայտի վրայ. «Փրկեցէք խեղճ Ռորինգօնին»:

Անպատճառ կամենում էր ապիկել իւր կըճուճները: Բակի մէջ կրակ փռուեց և կճուճները մէջը դրաւ: Երբ նրանք կարմրեցան և յետոյ սառեցան, հանեց ու տեսաւ, որ մէկի լատակը ապիկուել է: Ռորինգօնը լիշեց որ այդ մէկ կճուճի մէջ աղ կար, և ուղեց միւս կճուճներն էլ աղի ջրով թրջել ու վրայից աղ ցանել: Բայց այդ միջոցին սիրտը սկսաւ յետ դալ, և նա սաստիկ հիւանդացաւ: Պառկած մնաց և չէր կարողանում վեր կենայ. ոչ ոք էլ չկար, որ թոնրի մէջ փայտ ձղէր. այս պատճառով կրակը բոլորովին հանգաւ: Ռորինգօնը կարծաւ էր թէ իւր մահը մօտեցել է. սիրտաւ աղօթք անել, մահուան դալուն ստասելով:

6.

Ռորինգօնը երկու շաբաթի չափ հիւանդ պառկեց. յետոյ փոքր ինչ լաւացաւ և կերաւ

մի գետնախնձոր ու մի կիտրոն: Լամաները մօտեցան նրան և ձեռքերը լիզեցին. նա կթեց մեծ լամպին և կաթ լամպ: Երեք օրից յետոյ նա վեր կացաւ ու բակ գնաց: Կրակը բոլորովին հանդել էր, բայց կճուճներն այնպէս լաւ էին ապրկուել, որ կարծես թէ բրուտի ձեռքով թրծուած լինէին: Ռորինգօնն ուրախացաւ և ասաց. «Այժմ կարող եմ միս էլ եփել ինձ համար»: Բայց երբ որ փորեց մոխիրը—մէջը կրակ չկար. ուրեմն միս եփել չէր կարելի, և նա ասաց. «Ի՛հ, հող չէ. գետնախնձոր կ'ուտեմ, կաթ կրխմեմ, յետոյ գուցէ կրակ էլ ձարեմ»:

Ռորինգօնը առանց կրակի որ մնաց, էլ աւելի տխրեցաւ. մտածում էր, թէ ինչպէս վերագառնայ հայրենիք: Նա ուզեց մի մակույկ շինել իւր համար և գնաց փայտ որոնելու: Ճանապարհին գտաւ հնդկացորեն, որ մենք բրինձ ենք անուանում. հնձեց մի քանի հասկ ու պարկը գրաւ: Յետոյ մի ծառ նկատեց, որի վրայ լուբիա էր բուսնում. դրանից էլ քաղեց ու պարկը գրաւ. յետոյ էլի մի ծառ տեսաւ՝ վրան մեծ-մեծ պտուղներով: Ծառի բունն ահագին խոռոչ ունէր, և Ռորինգօնը մտածեց, թէ մակույկի համար պէտք կըլայ. նկատեց նրա կանգնած տեղն ու տուն գնաց: Գնալիս մի բոյն տեսաւ, մէջն էլ փոքրիկ թուփակներ.

վերցրեց այդ ձագերից մէկին, որ նրան մի քանի խօսք սովորեցնէ: Տուն որ հասաւ, վանդակ շինեց, թուփակին էլ մէջը դրաւ:

Ռորինգօնն անգաղար մտածում էր, թէ արդեօք կտրէ՞ թէ չըկտրէ այն մեծ ծառը: Երկար մտածեց ու վճռեց. «Արի կտրեմ, մակույկ շինեմ ու գնամ Համբուրգ և կամ մի ուրիշ մարդաբնակ տեղ»:

Միւս առաւոտը, վերկենալուն պէս, վերցրեց քարէ տապարն ու գնաց այն ծառի մօտ: «Քիչից չորս տարի պէտք կըլինի այս ծառը կտրելու համար», ասաց նա. «բայց որ կտրեմ վերջացնեմ, հօրս մօտ կ'երթամ»: Ասաց ու սկսաւ կտրել, և ամեն օր կտրում էր: Վաղ վաղ վեր էր կենում, լուացվում էր, փոքր ինչ բան էր ուտում ու գնում էր կտրելու. ճաշից յետոյ նորից էր գնում. իսկ երեկոյեան կթում էր լամաներին, դաս էր տալիս թուփակին և յողնած-չողնած պառկում էր քնելու:

Թուփակը շուտով սովորեց արտասանել հինգ-վեց խօսք, և Ռորինգօնը շատ ուրախացաւ. կարծեց, թէ այժմ իւր հետ խօսող մարդ ունի: Թուփակի անունը նա դրել էր Պ օ ղ ո ս ր կ:

Այսպէս ապրելով Ռոբինզօնն անցկացրեց երեք տարի, և ամեն օր կտրում էր ծառք բայց երեք տարուայ ընթացքում կէսն անգամ չէր կտրել:

Մի երեկոյ, քնելուց առաջ, նա մտածեց. «Արդէն երեք տարի է, որ այս տեղ եմ բնակվում, բայց դեռ չգիտեմ—ինչ կղզի է այս կղզին և որքան մեծ է: Գեռ ոչ մի անգամ չեմ ման եկել սրա շուրջը. եկ վաղը գնամ, աչքէ անցնեմ»:

Առաւօտեան վեր կացաւ, երկու հատ կողով կապեց լամայի մէջքին, մէջն ուտելու պաշար դրաւ, վերցրեց աղեղը, նետերն ու տէգը և գնաց:

Ճանապարհին շատ ծառեր էին աճում, որոնց նմանը նա ոչ մի ժամանակ չէր տեսել, և ափսոսաց, որ աւելի առաջ չէր գնացել այն կողմերը պտոյտ գալու: Ամբողջ օրը ման եկաւ, յոգնեցաւ և զիշերը մէ ծառի վրայ քուն եղաւ: Առաւօտեան նորից յառաջ գնաց: Գնաց գնաց ու հեաքեր նկատեց աւազի վրայ. ասես թէ բոբիկ մարդկանց հեաքեր լինէին: Զատ վախեցաւ ու սկսաւ փախչել: Վազելիս յանկարծ մարդկային ոսկորներ նշմարեց գետնի

վրայ. նա էլ աւելի սարսափեց ու չզիտէր, թէ ինչ անէ: «Այժմ բանս կորած է», մտածեց նա. «այս տեղ վայրենիներ են գալիս ու մարդ են ուտում. երբ լոմանան, որ ես այստեղ եմ, ինձ էլ կ'ուտեն»:

Զուտ շուտ վազեց դէպի տուն. արդէն մութն էր: Բարձրացաւ մի ծառի վրայ և ուղում էր քնել: Այդ միջոցին յանկարծ նա իւր անունը լսեց. նորից վախեցաւ և երբ որ չորս կողմը նայեց, տեսաւ որ ձայն տուողն իւր թութակն է, որ թռչելով նրա մօտ էր եկել: Ռոբինզօնը կանչեց նրան. թութակն իջաւ նրա ձեռքի վրայ ու նորից ձայն հանեց. «Խեղճ Ռոբինզօն, սըր ես, որտեղ ես ընկել»:

Ռոբինզօնն ամբողջ հինգ օր մաշվում էր մտածելով, թէ ինչ անէ, որ վայրենի մարդիկը նրան չըզտեն. յետոյ սկսաւ ուռիներ քաղել և անտառ տնկել իւր քարայրի առջև, որ դա ծածկուած մնայ ուրիշների աչքից:

Երկար աշխատեց ուռիներն արմատով հանելու և քարայրի շուրջը տնկելու համար. և այսպէս մի փոքրիկ անտառ յառաջ եկաւ:

Անտառը տնկելուց յետոյ Ռոբինզօնն ասաց. «Հապա եթէ վայրենիներն այս ծառերը կտրեն և կամ այրեն, ինձ էլ սպանեն քարայրիս մէջ: Լաւ չի լինիլ, որ հողի տակից մի

անցք փորեմ դէպի Հեռաւոր անտառը, որ երբ նրանք այստեղ գան, ես անտառ փախչեմ այդ անցքով»: Եւ նա սկսաւ անցք փորել:

Անցաւ էլի չորս տարի, բայց վայրենիները չէին գալիս:

Մի օր Ռոբինզօնն իւր Հաստ ծառը կըտրելու վրայ էր. լանկարծ սև ծուխ տեսաւ սարի ետևը: Քնաց տեսնելու, թէ ինչ ծուխ է, և տեսաւ ծովափի վրայ բազմաթիւ վայրենիներ. նրանք եկել էին նաւակով, կրակ էին վառել ու պար էին դալիս դրա շուրջը: Ռոբինզօնը նկատեց, որ նրանք իրենց նման երկու վայրենի դուրս Հանեցին նաւակից, մէկին սպանեցին ու սկսան կրակի վրայ խորովել: Միւսը փախաւ. ձեռքերից և ուղիղ դէպի այն կողմը վազեց, ուր որ նստած էր Ռոբինզօնը: Վայրենին շատ շուտ էր վազում. ետևից էլ ընկել էին երկու Հոգի:

Երբ որ նրանք Ռոբինզօնին մօտեցան, նա զարկեց տէգով մէկի փորին, և վայրենին վայր ընկաւ: Միւս վայրենին նետ արձակեց Ռոբինզօնի դէմ. նետը զիպաւ նրա Հագած մորթուն ու լետ թռաւ: Այն ժամանակ Ռոբինզօնը վազեց նետ արձակող թշնամու վրայ ու սպանեց նրան: Իսկ Հալածուած վայրենին, որին կամենում էին բռնել, Ռոբինզօնին որ տեսաւ,

քար կտրեցաւ սարսափից: Նա կարծեց, թէ Ռոբինզօնը մարդ չէ, Հապա մի ուրիշ էակ է. սրովՀետև վայրենիները տկլոր տկլոր են ման գալիս, իսկ Ռոբինզօնը պատած էր լաթերով ու լամայի մորթերով. գլխին սրածայր գտակ ունէր, երեսն էլ ծածկած էր մորթի զիմակով:

Ռոբինզօնը ձեռքով նշան արաւ, որ վայրենին մօտենայ. վայրենին եկաւ չոքեց նրա առջև, ոտքերից բռնեց ու իւր մէջքի վրայ դրաւ: Ռոբինզօնը Հրամայեց նրան վերկենալ և ցոյց տուաւ իւր տապալած վայրենու վրայ, որ դեռ կենդանի էր: Փախստականը վերցրեց տապարն ու սպանեց ընկածին. լետոյ փոս փորեց և երկու զիակն էլ մէջը թաղեց: Ռոբինզօնն և ազատուած վայրենին Հաւաքեցին սպանուածների նետերն ու գնացին Ռոբինզօնի քարայրը:

Ռոբինզօնը կարծում էր, թէ ծովափի վայրենիները կըսկսեն պտրել ընկերներին և իւր քարայրը կըգան. բայց նրանք մի քանի ժամանակ զանչեցին, գոռացին ու Հեռացան:

Ռոբինզօնը Աւրբաթ դրաւ իւր ազատած գերու անունը, որովՀետև ուրբաթ օր էր ազատել նրան: Աւրբաթը մի սև երիտասարդ էր: Նրանք միասին ընթրիք արին. լետոյ Ռոբինզօնը իւր լաման կթեց, իսկ Աւրբաթն

աչքերը բաց նայում էր և չէր հասկանում, թէ ինչ է նրա արածը: Վայրենիները կաթ չեն կթում, չեն էլ իմանում, որ կարելի է ուտել կաթը: Յետոյ պառկեցան քնել—Ռորինգօնը քարայրում, իսկ Ուրբաթը մառանում:

Ռորինգօնն և Ուրբաթը իրար չէին հասկանում, որովհետև ջոկ ջոկ լեզուով էին խօսում: Երբ Ռորինգօնը կամենում էր մի բան ասել Ուրբաթին, մատերով էր նշան տալիս: Ուրբաթն էլ նույնն էր անում, և նրանք քիչ-քիչ վարժվում էին հասկանալու մէկը միւսին:

Առաւօտեան նրանք գնացին վայրենի մարդկանց իջած տեղն և գտան մարդու ոսկորներ: Ռորինգօնը նշան արաւ Ուրբաթին, որ հաւաքէ այն ոսկորներն ու թաղէ: Ուրբաթն էլ թաղեց. իսկ Ռորինգօնը սկսաւ մոխիրը քրքրել, կարծելով թէ կրակ կըզտնէ: Բայց կրակը հանգել էր:

Քանի որ Ռորինգօնը մոխիրը քրքրելու վրայ էր, Ուրբաթը վերցրեց կացինն ու վազեց անտառ: Ռորինգօնը չհասկացաւ, թէ ինչո՞ւ է նա անտառ վազում իսկ Ուրբաթը այնտեղ հասնելուն պէ՞՝ երկու կտոր փայտ կորեց ու սկսաւ ուժով քսել մէկը միւսին: Փայտերը բռնկուեցան, և Ուրբաթն արագ արագ լետ եկաւ, կրակ բերելով:

Ռորինգօնը շատ ուրախ էր, որ այժմ նորից կրակ ունէր. վերցրեց բռնկուած փայտերն ու գէպի տուն. շտապեց Ուրբաթի հետ: Տուն որ հասան, Ռորինգօնը թոնկրը վառեց, մի ուլիկ մորթեց, միւր շամփրին անցկացրեց ու սկսաւ խորվել. կրակի մէջ էլ մի քանի հատ գետնախնձոր ձգեց: Այդ միջոցին նրա միտքն ընկաւ, որ լաւ լաւ կձուձներ ունի, և կամեցաւ մի համեղ ապուր պատրաստել. մէկը ջրով լքցրեց, ջրի մէջ էլ մի մեծ կտոր միս ու մի քանի գետնախնձոր ձգեց, և կրակի վրայ դրաւ կձուձը, որ եփ գայ:

Ուրբաթն ապուշ ապուշ նայում էր, թէ ինչ դուրս կըզայ այդ բանից: Վայրենի մարդիկ ոչ մի կերակուր չեն եփում, հապա միայն խորվում են:

Այդ միջոցին Ռորինգօնը դուրս գնաց մի բանի համար, իսկ Ուրբաթը պզգամ մտիկ էր տալիս կձուձին: Երբ որ ջուրը սկսաւ եռ գալ, Ուրբաթը կարծեց, թէ որ և է կենդանի ընկած կրիւնի կձուձի մէջ և նա է ջուրը պղտորում: Միտք ձեռը ջրի մէջ, որ դուրս հանէ կենդանուն, և այնպէս դռաց, որ Ռորինգօնը վախեցաւ: Ապուրը եփուելուց լետոյ՝ Ուրբաթը չուզեց համը տեսնել — վախենում էր. իսկ Ռորինգօնը մեծ ախորժակով կերաւ, որովհետև արդէն վաղուց տաք կերակուր չէր կերել:

8.

Ռորինգօնն ապրում էր Ուրբաթի Հետ և վարժում էր նրան իւր լեզուի մէջ: Ուրբաթը շուտով սկսաւ Հասկանալ նրան. Ռորինգօնն էլ սովորեց փոքր ինչ Ուրբաթի լեզուն: Նրանք միասին աշխատում էին էլ աւելի ամրացնելու պարիսպը — վախենում էին, թէ վայրենիները նորից կրգան: Այս պատճառով փոս փորեցին նրա շուրջը, և այդպէս էր անցնում նրանց կեանքը:

Մի օր Ռորինգօնն ասաց Ուրբաթին. «Ուրբաթ, կ'ուզէիր ծնողներիդ մօտ լինել»: Ուրբաթըն ասաց. «Վ'ուզէի»:— Ռորինգօնը Հարցրեց. «Հապա մարդու միս ուտել կ'ուզէիր»: Ուրբաթը պատասխանեց. «Չէ, չէի ուզիլ. ազգականներին էլ կ'ասեմ, որ մարդու միս չուտեն, Հապա կենդանիների միս և կաթ ուտեն»:

Ռորինգօնն ասաց. «Ե՛կ մի Հատ մակույկ շինենք, որ դու նրանով տուն գնաս»: Ուրբաթն ասաց. «Յօժար ե՛մ գնալ քեզ Հետ միասին. իսկ մենակ դնալ չեմ ուզում»: Ռորինգօնն ասաց. «Ուրբաթ, գնանք, շինած մակույկ տեսնենք»:

Գնացին: Ռորինգօնը ցոյց տուաւ իւր կրտսերած ծառը, իսկ Ուրբաթը սկսաւ ծիծաղիլ: Ռորինգօնը Հարցրեց. «Ա՛յ տղայ, ինչո՞ւ ես ծիծաղում» — «Ծիծաղում եմ նրա Համար, որ դու

քարով ես փորել ծառի բունը. այն ինչ կրակով այրելն աւելի Հեշտ է»:

Ռորինգօնը շատ ուրախացաւ այդ խօսքերին:

Բայց նրանք չէին կարող մակույկ շինել, որովհետև անձրևների ժամանակը նորից Հասել էր: Այժմ նրանք սկսան ճրագ թափել, խիբր Հիւսել, կապաներ ու վարտիկներ պատրաստել. յետոյ մի ուռկան էլ շինեցին բարակ բարակ չուաններից:

Ռորինգօնն ուզում էր քրիտոնեայ գարձներէ Ուրբաթին և ասում էր նրան, որ կոյ մի Ատուած, մի Յիսուս, և Ուրբաթը նրան լսելով սովորում էր պաշտել Ատածուն, մինչ գեռ առաջ կուռք էր պաշտում:

Անձրևներն որ անցկացան, Ռորինգօնը սկսաւ Ուրբաթի Հետ մակույկի վրայ աշխատել: Երկու ամսում պատրաստեցին մի մեծ մակույկ, որի առագաստը խիբրներից շինեցին, թիակները՝ փայտից: Յետոյ սկսան դէպի ծովը քաշել նրան, և մի ամբողջ ամիս քաշում էին, որովհետև ծովեզերքը մօտիկ չէր:

Ուրբաթն ուզում էր իւր Հայրենի երկիրը նաւել, իւր կղզին. իսկ Ռորինգօնն այն տեղ, ուր որ ապրում էին սպիտակ մարդիկ: Երկար փիճելուց յետոյ Ռորինգօնն ասաց Ուրբաթին.

«Եթէ ուզում ես վայրենիները մօտ գնալ, մե-  
նակ գնա. ես չեմ գնալ»:

Ուրբաթը չէր ուզում մենակ գնալ, և ա-  
սաց. «Կէ լաւ, սպիտակների մօտ գնանք. բայց  
ես ճանապարհը չգիտեմ»: Պաշար գրին մակոյ-  
կի մէջ, նստան ու գնացին:

Քամին յաջողակ էր, և նրանք շուտ-շուտ  
էին յառաջ գնում: Յանկարծ մի այնպիսի տեղ  
ընկան, ուր որ ջրի հոսանքը սաստիկ էր և  
կարծես թէ նաւակն ինքն իրեն էր յառաջ  
մղվում: Առագաստը վայր քաշեցին, բայց էլի  
մակոյկը շուտ էր վաղում: Այն ժամանակ Ուր-  
բաթն ասաց. «Ռոբինզօն, արի նետուինք ծո-  
վի մէջ, թէ չէ՛: Աստուած գիտէ— ո՛ր կրտա-  
նեն մեզ ալիքները»: Ռոբինզօնն ասաց. «Չէ,  
լաւ է՛: Աստուծն աղօթք անենք. գուցէ Նա  
մեզ ազատէ»:

Նրանց կղզին համարեա թէ չէր երևում, և  
Ուրբաթն ասաց. «Նայի՛ր, տէր իմ, մեր կղզին  
արդէն ծածկուելու վրայ է. լետ գառնալու  
հնար չի լինիլ— ճանապարհը կրկորցնենք»:

Հէնց որ նա այդ ասաց, մակոյկը սկսաւ  
ծանր շարժուիլ, և Ռոբինզօնը նկատեց, որ  
ջրի հոսանքն աւելի մեղմացել է: Նրանք  
լետ դարձան, հեռանալով այնտեղից, ուր որ  
ալէկոծութիւնը սաստիկ էր, և կամաց կա-

մաց տուն հասան: Արդէն արևը մայր էր  
մտել: Նրանք շատ սոված էին— առաւօ-  
տուանից ոչ մի բան չէին կերել. կուշտ-կուշտ  
ընթրիք արին ու պառկեցան քնելու:

Առաւօտը որ յուսացաւ, Ռոբինզօնն ասաց  
Ուրբաթին. «Ուրբաթ, արի նորից ճանապարհ  
ընկնենք»: Ուրբաթն ասաց. «Չէ, լաւ է՛ քեզ  
հետ միասին այստեղ մնամ: Չատ ուրախ կը-  
լինէի, եթէ հաչրս էլ այստեղ լինէր»: Ռոբին-  
զօնն ասաց. «Ի՛նչ կայ. գնանք, հօրդ բերենք»:

Ուրբաթն այդ որ լսեց, ուրախացաւ և ա-  
սաց. «Իմ հօրս կղզու ճանապարհը ինձ  
լաւ յայտնի է. այնտեղից մենք շատ անգամ  
ենք այստեղ եկել մարդու միս ուտելու համար»:

Ուրբաթն երկու բաժ շինեց ամուր  
փայտից և սկսաւ գետինը փորել, որ մէջը  
գետնախինձոր տնկէ. լետոյ նա ու Ռոբինզօնը մի  
բանջարանոց ու մի պարտէզ տնկեցին: Երբեմն  
միասին լողանում ու ձուկն էին որսում: Ուր-  
բաթը շատ լաւ էր լող տալիս: Երբեմն էլ  
գնում էին թռչուններ և կամ լամաներ խփե-  
լու նետով:

Ուրբաթը սովրեցրեց Ռոբինզօնին հաց թը-  
խել մի տեսակ ծառի պտուղներից. այդ հա-  
ցը մերինի պէս համեղ էր:

Բանջարանոցի ու պարտիզի գործերը որ

վերջացան, Աւրբաթն ասաց Ռորինգօնին. «Տէր իմ, գնանք այժմ Հօրս ետեւից»: Ռորինգօնը պատասխանեց. «Ձնտ լաւ»:

Մակոյկը կարդի բերին, յետոյ մի ամբողջ լամա խորվեցին, զանազան պտուղներ քաղեցին, որ ճանապարհին ուտելու պաշար ունենան, և պառկեցան քնելու:

9.

Նոր էին պառկել, որ փոթորիկ բարձրացաւ, անձրև տեղաց ու ամպերը սրտացին: Ռորինգօնն ասաց. «Աւրբաթ, լսում ես. եթէ մենք այժմ ծովի վրայ լինէինք, կրէնդդուէինք»:

Ասաց թէ չէ, յանկարծ թնդանօթի բոմբիւններ լսուեցան:

Ռորինգօնը վազեց խոհանոց, մի մեծ խանձող վերցրեց, սանդուղքի վրայով ժայռի գլուխը բարձրացաւ և ահագին կրակ վառեց, որ հեռուից էլ տեսնուի: Նա կարծում էր, թէ որ և է նաւ է ընկղմում և օդնութիւն խրնդրում: Բայց կրակը հանգաւ անձրևից: Ռորինգօնը տասն անգամ վառեց կրակը. անձրևը միշտ հանդցնում էր. այդպէս էլ հանգած մնաց:

Ամբողջ գիշեր Ռորինգօնը թնդանօթի պայթիւն էր լսում ու մտածում էր, թէ նաւը

եղբւրքի մօտ կանգնած կրլինի և Համբուրգ կրտանէ նրան: Արշալուսին նա վերկացաւ և վերև վազեց տեսնելու, թէ որ տեղ է կանգնած այն նաւը. բայց ոչ մի բան չտեսաւ: Յետոյ ելաւ մի աւելի բարձր սարի գլուխ և քիչ մնաց—իսկոյն մեռնէր ուրախութիւնից: Կրդու մօտերքում մի նաւ էր կանգնած:

Ռորինգօնը շտապով վազեց դէպի տուն ու գոռալով ասաց Աւրբաթին. «Յիւնն, եկանն»: Աւրբաթը կարծեց, թէ վայրենի մարդիկ են եկել. իսկոյն վերցրեց տէղը, աղեղն ու նետերը և դէպի ծովը վազեց Ռորինգօնի ետեւից: Այնտեղ նա էլ նաւը տեսաւ:

Ռորինգօնն և Աւրբաթը շտապով կրակ վառեցին ծովափին. բայց նաւի վրայ ոչ մի մարդ չէր երևում: Եւ Աւրբաթն ասաց Ռորինգօնին. «Տէր իմ, թոյլ տուր, որ ես լող տամ դէպի նաւը»: Ռորինգօնն ասաց. «Ի՛նչ գնան»:

Աւրբաթը հանեց իւր շորերն ու լողաց: Ռորինգօնն ափի վրայ կանգնած նայում էր նրա ետեւից: Երբոր Աւրբաթը մօտեցաւ նաւին, սաստիկ կերպով մի կենդանի հաջեց նրա վրայ: Աւրբաթը դողաց ահից. յետոյ զգուշութեամբ նաւի վրայ բարձրացաւ: Կենդանին եկաւ նրա ձեռքերը լցելու: Դա մի շուն էր, իսկ Աւրբաթը իւր օրում շուն չէր տեսել:

Մինչ Աւրբաթը նաւի վրայի եղած բաները գիտելու վրայ էր, յանկարծ մի այնպիսի հարուած ստացաւ ետեւից, որ տեղն ու տեղը վայր ընկաւ: Յետ որ նայեց, տեսաւ որ իրեն խփողը մի հրէշ է՝ մօրուքով ու պոզերով. և այդ հրէշը, ետեւի ոտքերի վրայ կանդնած՝ ուղում էր նորից գարնել նրան:

Աւրբաթը սատանայ կարծելով նրան՝ ջուրն ընկաւ. շունն էլ ետեւից: Լող տալիս Աւրբաթը լսում էր, որ մէկը գալիս է իւր ետեւից. նա կարծում էր, թէ եկողն այն պոզերով հրէշն է, և սաստիկ վախից շնչասպառ ափ հասաւ: Հասնելն ու գետնին փռուելը մէկ եղաւ:

Ռորինգօնի սիրտը գող ընկաւ, նա կարծեց թէ Աւրբաթը մեռել է. գրկեց նրան ու սկսաւ անունը տալ: Աւրբաթը ուշքի գալով պատմեց, թէ ինչից էր սարսափել: Եւ Ռորինգօնն ասաց. «Ձուր ես այդքան սարսափել. քո տեսածը ոչ թէ հրէշ է, այլ մի այծ. մեր երկրում շատ այծեր կան»: Աւրբաթն ասաց. «Ես ի՛նչ իմանայի, թէ այժն ի՛նչ է. կարծում էի — սատանայ է»:

Այդ միջոցին շունը լողալով ցամաք հասաւ, և Ռորինգօնն ասաց Աւրբաթին. «Սպիտակ մարդկանց բնակած երկրում շներ էլ շատ կան»:

Երբ որ Աւրբաթի վախն անցաւ, Ռորինգօնը նրան ասաց. «Նաւի մարդիկը խեղդուած կը լինին. գնանք միջի բաներն այտտեղ բերենք, թէ չէ՝ զուր տեղը կըկորչին»: Աւրբաթն ասաց. «Գնանք, մեր մակոյկով մօտենանք նաւին»:

Գնացին ուր որ սովոր էին կապել մակոյկը, բայց մակոյկը չկար. փոթորիկը նրան ծովն էր տարել: Աւրբաթը սկսաւ լաց լինել, մագերը փետել ու ձեռքելը կոտրտել: «Մի լար, Աւրբաթ», ասաց նրան Ռորինգօնը: Աւրբաթն ասաց. «Ատում ես՝ մի լար. հապա ինչո՞վ կ'երթամ հօրս մօտ»: Ռորինգօնը շարունակեց. «Ամօթ քեզ, որ լաց ես լինում: Աստուած կամեցել է, որ մեր մակոյկը ծովը տարուի. մենք էլ պէտք է նրա կամքին հնազանդուինք»: Աւրբաթն ամաչեց ու ասաց. «Գի՛ լաւ. էլ լաց չեմ լինիլ»:

Եւ Ռորինգօնն ասաց. «Աւրբաթ, եկ մի լատտ շինենք և լաստով գնանք մինչև նաւը»:

Ամբողջ օր ու գիշեր աշխատելով լաստը շինեցին. առաւօտեան մէջը նստան ու գնացին նաւի մօտ: Հասնելիս Ռորինգօնը տեսաւ, որ նաւը նստել է մի ծանծաղի վրայ (սայ տեղ) և չէ կարելի նրան տեղից շարժել, որովհետեւ ամուր է խրուել աւազի մէջ:

Աւրբաթը չէր ուղում նաւի վրայ բարձրանալ, որ չլինի թէ այժը նորից խփէ նրան.

բայց խեղճ կենդանին չէր կարողանում մինչև անգամ վերկենալ—նա երեք օր բան չէր կերել: Ռորինդօնը նրան ուտելու բան տուաւ. այժը խիստ շատ կերաւ և կշտանալով սկսաւ վազվզել ու թռչկոտել:

Ռորինդօնը դնաց տեսնելու, թէ ինչ կայ նաւում: Տեսաւ պաքսիմատով, ալիւրով ու ցորենով լիքը պարկեր, գինով լիքը տակառներ. տեսաւ շատ հրացաններ, վառօդ, կապար, կացիներ ու սղոցներ, տեսակ տեսակ հագուստներ: Նա շատ ուրախացաւ այդ ամենը տեսնելով, իսկ Ուրբաթը չիմարի պէս նայում էր և չէր հասկանում, թէ ինչացո՞ւ են այդ բոլոր իրերը:

Ամեն բանից առաջ նրանք վերցրին մի տակառ վառօդ ու կապար. յետոյ երկու հատ կապայ, երկու զոյգ շապիկ վարտիկ, երկու զոյգ կօշիկ, երկու հատ կացին, երկու հատ սղոց, — վերցրին թուղթ, գրիչ ու թանաք, մի կալծքար, մի հրահան (չաքմաք), ու պատրոյկ, մի տակառ պաքսիմատ—և այժին: Յետոյ նստան ճաշ ուտելու նաւի վրայ: Ռորինդօնը մի գանակ ու պատառաքաղ (չաթալ) տուաւ Ուրբաթին: Սա չգիտէր, թէ ինչ բան են զրանք. Ռորինդօնը հասկացրեց:

Ճաշից յետոյ նրանք նաւեցին դէպի եղեր-

քը: Յամաք որ իջան, Ռորինդօնը մտաւ թփերի մէջ ու զինուորի շորեր հագաւ: Ուրբաթը չկարողացաւ ճանաչել նրան. կարծեց թէ օտար մարդ է: Ռորինդօնը նրան էլ նոր շորեր տուաւ, բայց Ուրբաթը չգիտէր հագնելու կերպը. վարտիկը գլխին էր անցկացնում, թւերը ոտքին: Ռորինդօնն օգնեց նրան: Հագնուելուց յետոյ Ուրբաթը նայեց ինքն իւր վրայ, սկսաւ ծիծաղել ու թռչկոտել:

Ռորինդօնը սղոց բռնելու եղանակն էլ ցոյց տուաւ նրան. յետոյ նրանք մի ծառ կտրեցին և կայմ ու թիեր շինեցին, որ մակույկը լաւ ման գայ:

Ռորինդօնը քարայր դրկեց Ուրբաթին, որ դնայ լամաներին կթելու, իսկ ինքը մի հրացան լքցրեց: Երբոր ուրբաթը յետ եկաւ, Ռորինդօնն ասաց նրան. «Ուրբաթ, նայիր. տեսնում ես, վերւում ուրուր է թռչում: Նա իսկույն վայր կընկնի»:

Ուրբաթը նշան դրաւ ուրուրին և հրացանը արձակեց: Ուրբաթը լեղապատառ գետին բնկաւ: Ռորինդօնն ասաց. «Վախեցանք, հմ»: Եւ ցոյց տուաւ, թէ ինչպէս է պալթում հրացանը. նորից լքցրեց ու խփեց մի տախտակի: Ուրբաթն այս անգամ էլ պիտի զլորուէր, և շուարօձ ասաց. «Այդ ո՞րքան լաւ բաներ են հնա-

րել սպիտակները — մինչև անգամ կենդանի կրակ են հնարել»:

Հետևեալ օրը նրանք նորից գէպի նաւը գնացին: Այս անգամ մի թնդանօթ գրին լաստի վրայ, մի մի պարկ ցորեն, գաբի, սիսեռ, մի արկղ զամ (մեխ), մի տակառ վառօդ ու կապար, մի հատ մեծ առագաստ ու մի լետան (սրելու քար): Այս բոլորը ծովափ տանելուց յետոյ՝ երկրորդ անգամ նաւի վրայ ելան և ոսկի ու ազնիւ քարեր վերցրին: Եւ Աւրբաթն ասաց. «Ռորինգօն, ինչո՞ւ ես վերցնում այդ ոսկին ու քարերը: Մեր կղզու վրայ ոչ մի մարդ չէ բնակվում. ոչ գնող կայ, ոչ էլ ծախող»: Ռորինգօնն էլ ասաց. «Նրա համար եմ վերցնում, որ եթէ մի օր սրանց տէրը գտնուի, բոլորն էլ յետ տամ իրեն, և նա ուրախանայ»: Այս անգամ Ռորինգօնը հստեց նաւից զրուած թղթեր, մի քանի մոմ, հինգ վեց սղոց, բաճ ու կացին:

Կղզին որ հասան, Ռորինգօնն ասաց Աւրբաթին. «Ե՛կ մի վրան կարենք քաթանից, թէ չէ՝ անձրև որ գայ, բոլոր վառօդը կըթրջուի»: Աւրբաթը սովորեց կար կարել, և նրանք վրան շինեցին առագաստից:

Յետոյ Ռորինգօնը մի ռումբ դրաւ թնդանօթի մէջ և արձակեց դէպի ծովը. ռումբը որոտաց ու թռչելով ջուրն ընկաւ: Եւ Աւրբա-

թըն ասաց. «Հագար վայրենի մարդիկ էլ որ գան, ահ ու դողից կըվախչեն, եթէ մի այսպիսի ռումբ տուաքացնես նրանց գլխին: Կրկարձեն, թէ իրենց Տուվան աստուածն է որոտում»:

Երեկոյեան Ռորինգօնը մոմ վառեց ու սկսաւ գրուած թղթերը կարդալ: Այ մի բան չհասկացաւ, որովհետև նրանք սպանիական լեզուով էին գրուած. իսկ նա չգիտէր այդ լեզուն: Միայն այսքան իմացաւ, թէ նաւը Ասիա էր նաւում և 100 հողի գերի էր տանում վաճառելու համար:

Ռորինգօնը պահեց այդ բոլոր թղթերը, թանգազին ակնեղէններն ու ոսկին և ասաց. «Թող կենան. դրանց տէրը գուցէ մի օր լոյս ընկնի»:

10.

Ռորինգօնն և Աւրբաթը էլի մի վեց օր նաւը գնացին, և ամեն օր երեք-երեք անգամ դնալ դալով, 16 անգամ գնացին, և ինչ որ այնտեղ կար, բոլորն էլ վերցրին, կղզին բերին:

Երբ որ 17. անգամ գնալու վրայ էին, քամի սկսաւ փչել. կամենում էին շուտ-շուտ դէպի կղզին վերադառնալ, բայց չկարողացան. քամին լաստը շուռ տուաւ, վրան եղած բոլոր

բաները ջուրը ձգեց. Ռորինգօնն էլ Ուրբաթի հետ ջուրն ընկաւ: Ուրբաթը շատ լաւ էր լողում, իսկ Ռորինգօնը տախտակից բռնած էր լող տալիս: Ալիքները նրա ձեռքից տախտակը փրցրին, և Ռորինգօնն սկսաւ ընկղմիլ: Այդ միջոցին Ուրբաթը ջրի տակ սուզաւ, ձախ ձեռքով Ռորինգօնի դատկից բռնեց և քաշելով ցամաք հանեց նրան: Այնտեղ Ռորինգօնը մեռելի նման պառկած մնաց. Ուրբաթը վախից ինչ անելուն չգիտէր: Ռորինգօնը մի ժամի չափ ուշաթափ մնաց. չետոյ բաց արաւ աչքերը:

Ռորինգօնը փոքր ինչ զինի խմեց ուշքի գալու համար. չետոյ խոր թմրութեամ մէջ ընկաւ և շատ լաւ քնեց: Միւս օրը գնաց նաւը տեսնելու. բայց նաւը չկար. փոթորիկը խորտակել և ջարդ ու փշուր էր արել նրան:

Ռորինգօնն և Ուրբաթը այժմ մտածում էին, թէ ինչպէս տուն տանեն ափի վրայ դիդուած իրերը: Ռորինգօնն ասաց. «Այսպէս կանենք. առաւօտեան դու նրանց վրայ պահապան կրկանգնես. իսկ կէսօրին՝ ես. թէ չէ՝ վայրենիները որ գան, բոլոր ապրանքը կրկողպտեն»:

Նրանք լքցրին բոլոր վեց թնդանօթը, բերանները դէպի ծովը դարձրին, պատրուկն էլ մօտիկ դրին, որ պէտք եղած ըսպէին կրակ

տան: Յետոյ սկսան մինը միւսի ետևից քարայր տանել այն ամենը, ինչ որ հանել էին նաւից: Զուռն էլ էր օգնում կրելու. չետոյ Ռորինգօնը բերաւ լամաներին, որ նրանք էլ թեթեւ բաները կրեն:

Ռորինգօնը մի փոքրիկ տուն շինեց տախտակներից. պատուհաններն էլ ապակուց շինեց, որովհետև նաւից բերուած իրերի մէջ ապակի էլ կար: Յետոյ ասաց Ուրբաթին. «Յի, մի փայտի տուն շինենք մեր բակում և փոսի վրայ մի կամուրջ. կամուրջն օղակներով շինենք, որ կարելի լինի բարձրացնել և իջեցնել»: Կամուրջը շինեցին, գուռերի սուջու էլ երկու հատ թընդանօթ կանգնեցրին:

Յետոյ սկսան կղզու վրայ առատ բնոց բրինձը հնձել. Ռորինգօնը մանգաղի տեղ՝ մի հին սրով էր հնձում. երբ գետնախնձորն էլ քաղեցին, սկսան ցորենը կտակ և նաւից բերուած փոքրիկ աղօրիքով ալիւր աղալ:

Բրնձից ու ցորենից պաքսիմատներ թխեցին. ցորենի ալիւրից շինուած պաքսիմատներն աւելի լաւ դուրս եկան, և Ռորինգօնն ասաց Ուրբաթին. «Յի, ցորեն ցանենք. դա մեզ բրինձից աւելի պէտք կըզայ»:— Յանեցին: Այն կըզղին տարին երկու անգամ էր հունձ տալիս:

Այժմ Ռորինգօնն ասաց Ուրբաթին. «Յի

մի դարբնոց շինենք մեզ համար. բազեր, մե-  
խեր ու դանակներ կոփենք»:

Անճրեւի ժամանակն որ հասաւ, Ռորինդո-  
նը դարբնոցի վրայ մի տանիք շինեց տախ-  
տակից, և նրանք սկսան այնտեղ աշխատել.  
մի արօր ու մի տափան շինեցին, և երբ անճրե-  
ւներն անցկացան, լամաներին արօրին լծեցին,  
գետինը հերկեցին և ցորեն, գարի ու սիսեռ  
ցանեցին:

Այսպէս ապրեցան նրանք մօտ կէս տարի:  
Մի առաւօտ Ռորինդօնը ծովափ զրկեց Ուրբա-  
թին, որ օտարէներ հաւաքէ, իսկ ինքը տանը  
մնաց՝ վառարանը նորոգելու համար: Յանկարծ  
տեսաւ, որ Ուրբաթը վազէ-վազ լետ է գալիս:  
Երբ որ եկաւ հասաւ շնչասպառ՝ ոչինչ ասել չէր  
կարողանում, միայն թէ դանչում էր. «Եկել են,  
եկել են»:

«Ովքեր են եկել», հարցրեց Ռորինդօնը:

Իսկ Ուրբաթը դանչում էր. «Երկու, երեք,  
վեց նաւակ»:

Ռորինդօնը վազելով բարձրացաւ լերան  
վրայ և տեսաւ, որ ափի մօտ վեց նաւակ է  
կանգնած և մէջն էլ շատ վայրենի մարդիկ կան:  
Չուտ վայր իջաւ և ասաց. «Իէ, Ուրբաթ,  
վերցրու հրացանդ, և շուտով այնտեղ գնանք»:

Նրանք լքցրին վեց հատ հրացան և այն-

պէս ձանապարհ լուսեցին, որ վայրենիները նը-  
րանց չըտեսնեն: Եւ Ռորինդօնն ասաց. «Ուր-  
բաթ, գնա տես, ինչ են անում»:

Ուրբաթը թաքուն մօտեցաւ վայրենիներ-  
րին, ամեն բան զիտեց, և լետ գալով ասաց  
Ռորինդօնին. «Վայրենիները կրակ են վառել,  
շուրջը նստոտել են. կրակի վրայ էլ մի մարդ  
են խորովում. իսկ մի ուրիշ մօրուքաւոր սպի-  
տակ մարդ, ձեռքը ոտքը կապկպած, գետնի  
վրայ ընկած է: Ռորինդօն, շուտով գնանք»:

Ծովափի մօտ մի փոքրիկ անտառ կար.  
այդ անտառի միջով նրանք մօտեցան վայրե-  
նիներին, և վայրենիները նրանց չընկատեցին:  
Ռորինդօնն այնպէս ուղղեց և արձակեց հրա-  
ցանը, որ գնտակը վայրենիների գլխի վրայով  
թռաւ: Սկզբում վայրենիները ցեր ու ցան ե-  
ղան ահից. բայց լետույ, տեսնելով որ ոչ ոք  
չկայ, կարծեցին թէ լսածներն ամպի գոռոց  
է, նորից հաւաքուեցան և սկսան պար գալ  
կրակի շուրջը:

Եւ Ռորինդօնն ասաց Ուրբաթին. «Զարկ»:  
Երկուսն էլ միտաին հրացան արձակեցին. վայ-  
րենիներից երեք մարդ սպանուեցան, հինգը՝  
վերաւորուեցան: Էլի մի անգամ որ պարպեցին,  
նորից երեք մարդ ընկան: Յետոյ՝ վայրենիները  
վրայ լարձակուեցան. Ուրբաթը սկսաւ կռուել.

իսկ Ռորինդօնը վաղեց այն մարդու մօտ, որ կապուած ընկած էր գետնի վրայ, քակեց նրա թօկերն և հարցրեց նախ գերմաներէն, յետոյ անգլիերէն, թէ «Ո՛վ ես»: Մարդն ասաց. «Սպանիացի եմ»: Ռորինդօնը գինի տուաւ նրան որ խմէ, յետոյ մի ատրճանակ և սուր տուաւ: Սպանիացին սկսաւ կռուիլ վայրենիների հետ և շատերին ջարդեց: Այդ միջոցին նրա վրայ երկու ուժեղ վայրենիներ ընկան և քիչ էր մնում սպանէին: Ռորինդօնը զարկեց մէկին հրացանով, միւսի գլուխն էլ սրով կտրեց:

Վայրենիները, տեսնելով որ իրենցից շատերը սպանուել են, նաւակները նստան ու փախան: Աւրբաթն և սպանիացին ուզում էին նրանց ետևից ընկնել, բայց Ռորինդօնն ասաց. «Հերիք է, որքան կոտորուեցան»: Աւրբաթն ասաց. «Պէտք է միտնենքին էլ կոտորել, թէ չէ՝ տուն կ'երթան, շատ վայրենիներ կրբերեն և մեզ կըմեռցնեն»: Իսկ Ռորինդօնն ասաց. «Ի՞նչ ես վախենում—մենք հրացաններ ու թնդանօթներ ունինք, նրանք չունին: Թող գան»:—Յետոյ զնացին տեսնելու, թէ քանի մարդ էր սպանուել. բոլորի թիւն էր 21:

Ռորինդօնը զնաց վայրենիների թողած նաւակը տեսնելու և գտաւ նրա մէջ մի կապուած ծերունի: Ասպերը բաց անելուց յետոյ,

կանչեց Աւրբաթին, որ իւր լեզուով ծերունու հետ խօսէ: Հէնց որ Աւրբաթը վայրենուն տեսաւ, սկսաւ համբուրել նրան և թռչիտել նաւակում: Ռորինդօնը հարցրեց, թէ ինչու է այդպէս ուրախանում:

Աւրբաթն ասաց «Սա իմ հայրն է»: Ռորինդօնը գինի տուաւ նրան. իսկ Աւրբաթը սկսաւ շփել հօր մարմնի անդամները, որոնք ուռել էին կապերից:

Ռորինդօնը հարցրեց. «Հաց տուիր հօրդ»: Աւրբաթն ասաց «Ի՛նչ լիմար եմ, բայրը ինքս կերայ», և դուրս թռաւ նաւակից, վաղեց, շուտով յետ եկաւ հաց ու պանիր բերելով, և տուաւ հօրն ու սպանիացուն, որ ուտեն: Յետոյ Աւրբաթը մի նաւակի մէջ տեղաւորեց իւր հօրն ու սպանիացուն. իսկ Ռորինդօնը միւս նաւակի մէջ դրաւ հրացանները ու վայրենիներից մնացած տէգերը, և ամենքը միասին եղերքին մօտիկ ճանապարհ բռնելով, դէպի քարայրը նաւեցին:

Ծեր վայրենուն ու սպանիացուն քարայրը տանելուց յետոյ կերակուր տուին նրանց, որ ուտեն. նրանք լաւ կերան կշտացան և քուն եղան: Միւս օրը Ռորինդօնն ասաց սպանիացուն. «Ի՛նչպէս ընկար վայրենիների ձեռքը»: Սպանիացին ասաց. «Մենք մի նաւակ ունէինք

և Ասիա էինք նաւում, Հետներս էլ Հարիւր Հատ զերի էինք տանում վաճառելու Համար. քսանը ճանապարհին մեռան, միայն ութսունը մնացին: Յանկարծ փոթորիկ բարձրացաւ և զիշերը մի ծանծաղի մէջ ընկանք (ջուրը քիչ աւազոտ տեղ). սկսանք թնդանօթներ արձակել, բայց ոչ ոք չեկաւ մեզ օգնելու: Գերիները մեր հրացանները յափշտակեցին, մեր բոլոր նաւակները խլեցին և ուզում էին նաւի վրայ թողնել մեզ ու փախչել. բայց մենք ազգացեցինք, որ մեզ էլ նաւակների մէջ աւնեն: Առաւօտեան մի կղզի իջանք. այնտեղ վայրենի մարդիկ էին բնակվում. նրանք մեզ տեսնելով ուրախացան և ձկնով կերակրեցին: Կէս տարուայ չափ ապրեցանք նրանց մօտ: Մի օր ուրիշ վայրենիներ եկան այն տեղ մեզ Հետ կուռելու Համար, մեզնից շատերին սպանեցին, իսկ ինձ, Ուրբաթի Հօրն և մի ուրիշ վայրենի մարդու զերի վարեցին ու կերան այն մարդուն»:

Ռորինդօնն ասաց. «Գնանք, մի քանի բաներ ցոյց տամ քեզ»: Եւ ցոյց տուաւ նաւից Հանած բաները: Սպանիացին ասաց. «Այս բաները մեր նաւի վրայ էին գտնվում. բոլոր սակին պատկանում էր մի վաճառականի, իսկ թանգազին ակները—մի մեծաւորի, որ մեռաւ

ճանապարհին և մեռնելիս ապապրեց, որ քարերը Անգլիա տարուին և իւր կնոջը տրուին»: Ռորինդօնն ասաց. «Այս բոլոր իրեղեններն աչքիս պէս պահել եմ. եթէ Անգլիա զնացող մարդ պատահի, նրան կըտամ, որ տանէ մեծաւորի կնոջը Հասցնէ»:

11.

Միւս օրը նրանք սպանուած վայրենիների դիակներն այրեցին: Ուրբաթն ասաց իւր Հօրը, թէ մարդ ուտելն ամօթ և մեղք է: Ծեր վայրենին սկզբում չէր Հասկանում, թէ ինչն է մեղք: Ուրբաթը պատմեց նրան, թէ մի ճշմարիտ Աստուած կայ, թէ կուռքեր պաշտել Հարկաւոր չէ. Հայրը Հաւատաց: Ռորինդօնն Ուրբաթի Հօր անունը Հինգշաբթի դրաւ:

Ռորինդօնը բոլոր դիակներն այրելուց յետոյ տոսաց. «Սպանիացի, վերկաց այնտեղ գնա, ուր որ մնացել են ազգակիցներդ, և մեզ մօտ բեր նրանց. նրանք մեզ մօտ աւելի լաւ կ'ապրեն»: Սպանիացին տոսաց. «Լաւ, բայց մենակ ինչպէս զնամ»: Ռորինդօնն ասաց. «Հինգշաբթին էլ Հետդ կ'երթայ»: Սպանիացին ասաց. «Թող այդպէս լինի, — վազը կ'երթանք»: «Ռորինդօնն ասաց. «Զէ. վազը մի գնար. առաջուց պէտք է գե-

տինը հերկել ու ցանք անել, որ երբ ազգակիցներդ գան, ուտելու բան ունենան»:

Սիրան գետինը հերկել ու ցորեն ցանել, այդ աշխատանքը երկու շաբաթից աւարտեցին և յետոյ ճանապարհի պատրաստութիւն տեսան: Ռոբինզօնը մի թուղթ գրեց—այսպէս գրեց. «Ո՛վ որ ուզում է իմ կղզու վրայ բնակուիլ, պարտաւոր է հնազանդուիլ ինձ և բոլոր հրամաններս կատարել. իսկ ով որ չի հնազանդուիլ և չի աշխատիլ, ես նրան կախել կրտամ»: Սպանիացին վերցրեց այս թուղթը, չինդշարթու հետ նաւակ նստաւ, և դնացին:

Չատ տխրեցաւ Ուրբաթը իւր հօրից բաժանուելով, և Ռոբինզօնն ասաց նրան. «Ուրբաթ, ինչո՞ւ ես տխրում. եկ որսի գնանք»: Արսի ելան և մի քարայր տեսան: Ռոբինզօնն ասաց. «Ուրբաթ, մտիր ու տես, այդ ինչ քարայր է»: Ուրբաթը մտաւ. բայց հէնց որ գլուխը մէջն էր գրել, գոռաց ու շնչատուտ յետ փախաւ: Ռոբինզօնը յետ կանչեց նրան և ասաց. «Ինչ բանից վախեցար»: «Նւ Ուրբաթն ասաց: «Մէխ, Ռոբինզօն, այնտեղ մի սատանայ է նրստած՝ մեծ-մեծ աչքերով ու բերանով,—այնպէս մեծ բերանով, որ քեզ էլ, ինձ էլ մէկ անգամից կուլ կրտայ»: Ռոբինզօնն ասաց. «Գնա տուն և լապտեր բեր»:

Լապտերը բերելուց յետոյ Ուրբաթը խնդրեց Ռոբինզօնին, որ չըմտնէ քարայրը, բայց Ռոբինզօնն ասաց. «Պիտի մտնեմ. ինչ ես վախենում»:

Մտաւ քարայրն ու տեսաւ ծեր այծին. սա արդէն մեռնելու վրայ էր և չէր կարողանում վեր կենալ: Ռոբինզօնն աչքէ անցրեց քարայրը, իսկ Ուրբաթը մօտեցաւ այծին: Էլ չէր վախենում նրանից: Ռոբինզօնն ամեն բան դիտելուց յետոյ ասաց. «Գուրս քշենք այծին»: Գուրս քշեցին, և այծը մեռաւ:

Սպանիացին ու չինդշարթին արդէն եօթն օր է, որ գնացել էին. ութերորդ օրն Ուրբաթը վազելով Ռոբինզօնի մօտ եկաւ և ասաց. «Շէլ յերան վրայ բարձրանանք, հայրս գալիս է»:

Ռոբինզօնը սարի վրայ ելաւ ու տեսաւ, որ մի մեծ նաւակ է գալիս՝ մէջը շատ մարդիկ նստած, և ասաց. «Սկողները մերոնք չեն. գրանք անգլիացիք են—գուցէ ծովի հէներ (աւազակներ) լինին. գնանք միւս ժայռի վրայից նայենք»:

Ելան միւս ժայռի վրայ և մի մեծ նաւակ տեսան ափի մօտերքում: Ուրբաթն ասաց. «Գնանք թաքչինք անտառի մէջ, տեսնենք՝ ինչ պիտի անեն»: Ռոբինզօնն ասաց. «Գնանք»: Իջան ժայռից և թաք կացան ծառերի հտեւ. նրանք ամեն բան տեսնում էին, իսկ ի-

րենց ոչ ոք չէր տեսնում: Նաւակն ափին մօտեցաւ, միջից 11 մարդ գարս եկաւ և երեք հոգի էլ կապուած դուրս հանեցին: Եւ մի բարձր հասակով մարդ ասաց կապուածներին. «Մենք ձեզ պիտի սպանենք»: Իսկ կապուածներն սկրսան աղաչել, թէ «Մի սպանիր մեզ, լաւ է՝ այս կզգաւ վրայ թող. այստեղ ոչ ոք չէ բնակւում: բոլորը մին է՝ սովից կրմեռնենք»: Բարձր հասակով մարդն ասաց. «Գէ լաւ, կրտեսնենք»:

Ռորինգօնն այդ որ լսեց, ասաց Ռերբաթին. «Չուտ գնա, մի քանի հատ հրացան և ատրճանակ, վառօդ ու զնդակներ բեր»: Ռերբաթը բերաւ, և նրանք հրացանները լքցրին:

Երեք կապուածները նստած էին, իսկ միւսները կղզու վրայ ման գալու գնացին. մի քանիսն էլ պառկեցան որ քնեն: Երբ որ քնեցին, Ռորինգօնը թաքուն մօտեցաւ կապուածներին. նրանք վախեցան, իսկ Ռորինգօնն ասաց. «Մի վախենաք. ասացէք—ովքեր էք»: Եւ մէկն ասաց. «Ես նաւապետ եմ. սրանք ընկերներս են. նաւաստները չկամեցան ինձ հնազանդուիլ և ուզում էին սպանել մեզ»: Ռորինգօնն ասաց. «Ես կ'ազատեմ ձեզ մահից, միայն թէ երդում արէք, որ ինձ Անգլիա կրտանէք»: Ամենքը երդում արին, և Ռորինգօնն ասաց. «Նաւաստները քնած են — կապենք

նրանց»: Կամացուկ մօտեցան նաւաստներին և կապկպեցին նրանց. երկուսը վերկացան և սուրբը հանեցին: Նաւապետն ասաց նրանց. «Մի-թէ չէք տեսնում, որ ձեր ընկերները կապուած են»: Տեսան թէ չէ, ծունկ չոքեցին ու սկսան ներողութիւն խնդրել. նրանց ձեռքերն էլ կապեցին: Եւ Ռորինգօնն ասաց Ռերբաթին. «Տանենք սրանց այն քարայրը ուր որ այժը սատկել էր: Այնտեղ տարին ամենքին և մուտքը մի մեծ քարով փակեցին: Իսկ նաւակը ցամաք հանելով յատակը ծակեցին, որ եթէ նաւից մարդիկ դան, չկարողանան լետ տանել նրան:

Այն միջոցին թնդանօթի ձայն որոտաց նաւի վրայից, նշան տալով, որ կղզու վրայ գտնուող նաւաստները նաւ վերադառնան: Յետոյ մի ուրիշ նաւակ եկաւ նաւի կողմից, միջից մարդիկ դուրս եկան ու սկսան առաջուց եկողների անունը տալ: Կանչեցին, կանչեցին, բայց վերադարձող չկար. արդէն ուզում էին դէպի նաւը լետ գնալ: Եւ Ռորինգօնն ասաց Ռերբաթին. «Անտառ գնա և ձայն հանիր. նրանք կրկարծեն, թէ կանչողն իրենց ընկերներից մէկն է, և ձայնիդ ետեւից կ'երթան»: Ռերբաթը սկսաւ կանչել, և նրանք ամենքը նրա կողմը վազեցին, իսկ նաւակի՝ մօտ միայն երկու մարդ մնաց:

Ուրիւնգօնն ու նաւապետը երկու ընկերով  
 թաքուն մօտեցան նաւակին, բռնեցին կապե-  
 ցին պահապաններին, իսկ նաւակը մացառի մէջ  
 թաքցրին: Նաւաստները չեա որ եկան, տե-  
 օան որ նաւակը չկայ, և շատ վախեցան: Այն  
 ժամանակ Ռորինգօնն ասաց նաւապետի օղնա-  
 կանին, որ նրանց մօտ գնայ: Օղնականը գնաց  
 և ասաց. «Այս կղզու թագաւորն գերի է բռն-  
 անել ամենքիդ. գնացէք նրա մօտ. եթէ չեր-  
 թաք. նա 100 գինուօր կըղրկէ և բոլորիդ ըս-  
 պանել կըտայ»: Նաւաստներից մէկն ասաց.  
 «Հապա եթէ գերի գնանք և նա էլի մեզ սպա-  
 նել տայ», նաւապետը կանչեց նրան մացառի  
 միջից. «Թ ո վ մ ա ս - Ս մ ի թ, ձայնս ճանաչում  
 ես: Ձեզ եմ ասում—գերի գնացէք, ոչ ոքին  
 չեն սպանիլ, միայն Ա թ ք ի ն ս ի ն կըսպանեն»:  
 Իսկ Ա թ ք ի ն ս ի ն հէնց այն բարձրահասակ մարդն  
 էր, որ կամեցել էր սպանել նաւապետին:

Նաւաստները բոլորը միասին ասացին.  
 «Լաւ է՝ ամենքս միասին գերի կ'ըլթանք»,— և  
 երբ եկան, բոլորի ձեռքերն ետևներից կապեցին:

Նաւապետն ասաց նրանց. «Վաղը գուք  
 ինձ հետ միասին նաւի վրայ կ'երթաք և կը-  
 խլէք նրան ազտամբ նաւաստների ձեռքից:  
 Եթէ ինձ չօգնէք, կղզու վրայ մնացող ընկերներդ  
 կըսպանուին»: Նրանք ասացին. «Լաւ է՝ մենք

կ'օգնենք քեզ. միայն թէ ամենքիս ներքի»:

Եւ Ռորինգօնն ասաց նաւապետին. «Քնն  
 նաւի վրայ, հէնց որ տիրես նրան, թնդանօթ  
 արձակիր»: Նաւապետն ասաց. «Լաւ»: Եւ գնաց  
 հետը մի քանի նաւատոներ անսեղով, իսկ  
 միւսները մնացին: Երկար ժամանակ ոչ մի  
 ձայն չէր լսվում, զիշերը մութն էր, և Ռորին-  
 գօնը կարծեց, թէ նաւապետին սպանել են:  
 Յանկարծ թնդանօթը որոտաց: Ռորինգօնը շատ  
 ուրախացաւ, որ նաւապետը նաւին տիրել է և  
 թէ ինքն էլ այժմ այդ նաւով Եւրոպա կըվե-  
 րտղաւնայ, իւր հօրն ու մօր տունը կըտեսնէ:  
 Նա մինչև առաւօտ սարի վրայ կանգնած մնաց  
 և միշտ ծովի վրայ էր նայում, որ նաւի դալը  
 տեսնէ: Երբ լուսոցաւ, Ռորինգօնն ասաց Աւր-  
 րաթին. «Նաւը չէ՞ դալիս. երևի թէ նաւապե-  
 տը խաբեց մեզ և ինքը մենակ հեռացաւ: Այժմ  
 քարայրում նստած նաւաստները կըսպանեն  
 մեզ»: Աւրրաթն ասաց. «Ճշմարիտ է»: Մինչ  
 նրանք այսպէս խօսում էին, յանկարծ մի  
 շարժում լսեցին. չեա որ նայեցան, տեսան  
 որ նաւապետը դալիս էր նաւաստների հետ  
 միասին: Ռորինգօնը շատ ուրախացաւ և աս-  
 աց. «Նաւապետ, ես կ'արձում էի թէ գու մեզ  
 խաբել ես: Հապա նաւդ ո՞ր տեղ է»: Նաւա-  
 պետն ասաց. «Աղզու միւս կողմը տարի, որ ա-

ւելի հանգիստ կանգնի - այնտեղ քամին սառ-  
տիկ չէ»։ Յետոյ Ռորինգօնը նաւապետին իւր  
մօտ ճաշի հրաւիրեց։ ճաշի ժամանակ Ռորին-  
գօնը պատմեց նաւապետին, թէ ինչպէս էր  
բնկել կղզու վրայ և քսան տարի ապրել այն-  
տեղ։ Նաւապետը շատ զարմացաւ և ասաց.  
«Ռորինգօն, երբ տուն կ'երթաս»։ Ռորինգօնն  
ասաց. «Սպասիր, թող Հինգշաբթին և սպա-  
նիացին էլ գան — այն ժամանակ կ'երթամ»։  
Նաւապետն ասաց. «Հապա Աթքինօն և միւս  
նաւաստներին ինչ անենք»։ Եւ Ռորինգօնն ա-  
սաց. «Ներքի նրանց, և թող այս կղզու վրայ  
բնակուին»։

Նաւապետն ասաց. «Լաւ»։

Ռերբաթը գնաց յայտնեց նաւաստներին,  
որ նրանց սպանելու չեն, և նրանք շատ ու-  
րախացան։ Եւ Ռորինգօնն ասաց. «Ես ձեզ կը-  
թողնեմ անստուններս ու հրացաններս և ամեն  
բան, ինչ որ ունիմ, միայն թէ լաւ մարդիկ  
եղէք»։ Նաւաստներն ասացին. «Լաւ մարդիկ  
կրկնինք»։

Այդ միջոցին վաղելով եկաւ Ռերբաթն և  
ասաց, որ Հինգշաբթին և սպանիացին եկել են։  
Ռորինգօնը գնաց նրանց տեսնելու և տեսաւ,  
որ Հինգշաբթու հետ եկել են երկու սպանիա-  
ցի և երկու վազրենի կին։ Ռորինգօնն ասաց.

«Ինչու են եկել այդ կանայքը»։ Սպանիացին  
ասաց. «Իմ ազգակիցներս պակուել են, վայ-  
րենի կին են առել. սրանք նրանց կանայքն են,  
կամենում են այս կղզու վրայ մնալ»։ Ռորին-  
գօնն ասաց. «Թող մնան»։

Յետոյ սկսաւ ճանապարհի պատրաստու-  
թիւն տեսնել. վերջրեց իւր կաբան ու վար-  
տիկը, որ կարել էր լամայի մորթից — սուաւ  
իւր աղեղը, տէգերն ու քարէ կացինը, որ մե-  
նակութեան ժամանակ էր շինել, — վերջրեց և  
թանգազին քարերն ու սոկին, որ նաւի վրայ  
էր դրել, և այս բոլորը նաւի մէջ տեղաւորեց։

Երբ որ ամեն բան նաւը դրին, Ռորինգօնն  
աղօթք արաւ Աստուծու և նաւ նստաւ իւր եր-  
կու լամաների, թութակի և շան հետ միասին։  
Ռերբաթն ու Հինգշաբթին էլ նրա հետ նստան։  
Կղզու վրայ մնացին վեց անդլիացի և երկու  
սպանիացի իրենց կնիկներով։

Ռորինգօնը յաջողակ նաւարկելով մի ամ-  
սից Սպանիա հասաւ, և դնաց Կաղբին քա-  
ղաքը։ Այնտեղ նա գտաւ այն վաճառականին,  
որ ոսկու տէրն էր. վերադարձրեց նրան նաւի  
մէջ գտած ոսկին և ասաց. «Ամբողջ մի տարի  
պահեցի ոսկիդ»։ Իսկ վաճառականն ասաց. «Դու  
մեծ նեղութիւնից ազատեցիր ինձ. ինձ ուղղում  
էին բանտ ձգել պարտքերիս համար. քեզ թող

լինի սուր կէտը»: Ռոբինզոնն ասաց. «Սակիդինձ հարկաւոր չէ. ես իմս ունիմ»:

Կադիքսից գէպի Անգլիա նաւեցին, Պորտուգալացի քաղաքն եկան: Հինգշաբթին մեռաւ ճանապարհին. Ռոբինզոնը շատ լաց եղաւ: Լամաներն էլ սատկեցան:

Ռոբինզոնը Պորտուգալացի սր եկաւ, գնաց գտաւ սպանիական նաւի վրայ մեռած մեծաւորի այրի կնոջն և լեռ տուաւ նրան թանկագին քարերը: Այրի կինը շատ տղբատ էր և մտրալով էր ապրում: Չատ շնորհակալ եղաւ, որ Ռոբինզոնն աղատեց նրան աղքատութիւնից:

Պորթուգալացի Ռոբինզոնը մի նաւ վարձեց Համբուրգ գնալու համար: Նաւը լաւ էր գնում և արդէն Համբուրգ հասնելու վրայ էր, որ յանկարծ մի սաստիկ փոթորիկ բարձրացաւ և նաւը խորտակեց: Մարգիկ մակուկներով վրէկուեցան, իսկ նաւի մէջ եղած բոլոր ապրանքները ջուրն ընկան. Ռոբինզոնի սակին էլ ջուրն ընկաւ. միայն շունը ողջ մնաց — նա լող էր տալիս մակուկի ետեւից:


Ռոբինզոնը Ռոբինզոնի հետ Համբուրգ որ մտաւ, իսկոյն հօր մօտ գնաց: Հայրը սկզբում չկարողացաւ ճանաչել նրան. արդէն ձերացել էր, վաս էր տեսնում: Բայց երբ իմացաւ, որ երկրորդ որդին է, լաց եղաւ. Ռոբինզոնն էլ լաց

եղաւ: և ասաց. «Հայրիկ, հապա մայրս որտեղ է»: Հայրն ասաց: «Մեռել է. նա միշտ ուզում էր քեզ տեսնել»: Ռոբինզոնն ասաց. «Յիմար էի, որ ճանապարհորդելու գնացի. փառք Աստուծու, որ այժմ տանն եմ»: Յետոյ պատմեց հօրը, թէ ինչպէս էր ընկել կրդու վրայ և քսան տարի այնտեղ ապրել: Հայրը շատ դարմացաւ և սիրով ականջ էր դնում որդու ասածներին:

Ռոբինզոնը հիւան դարձաւ և սկսաւ աշխատել Ռոբինզոնի հետ մի նաւահանգստի մէջ: Նրանք միշտ շատ գործ ունէին, որովհետեւ լաւ էին աշխատում: Երկար ապրեցան և շատ փող վաստակեցին: Ռոբինզոնի հայրը մեռաւ. նրանից յետոյ Ռոբինզոն էլ մեռաւ: Եւ Ռոբինզոնը նորից մնաց այնպէս մենակ, ինչպէս որ էր կղզու վրայ ընակուելիս:







1772

0006304

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0006304

